



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	Օրագիր եւ Լրագրութիւն.....	Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ
ՎԷՊ	Գնանք ընթերցել (Տփղիսի կեանքից) (Շաբ. և վերջ)	Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ
ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ	Ժողովրդական դասեր (Շաբ. և վերջ)	Լ. Բ.
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	Տաղ Նաղաշ Յովնաթանէ տաղեալ.....	Հ. ԻԿԻՆԵԱՆ
ԶԱՆԱԶԱՆՔ	Հնտանեաց դիմագիծը (Ալեքսանդր Տալիտ) Թրգ.	Յ. Թ.
ՔԱՂՈՒԾ ՇԱՐ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Աղբային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կալվին ալ Մոնթէբէն) Թարգմ.....	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դահ. արծամ
Մէկ թերթին գինն է.....	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիք և Մարի Լրագրաց
Ղալաթիս, Նորաստուծոյ խոն

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐԱՍ

Ղալաթիա, 27 Սեպտեմբեր
ԸՆԹԱՑՔ ՓՈՆՈՆԱԿԱԴՐՈՅ

Է ամիս Լոնտրայի վրայ պանքայի	109 1/2
3 » » » (վճռվելն)	109 1/8
3 » Բարիսի » (պանքայի)	23 02 1/2
3 » » » (վճռվելն)	23 10

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բանսոյլուտէ

Գահեկան	
Երեկ երեկոյ Գոց. (Միաց. D. Սէրի Գ. Կ. 45 05	
Պորային գոցուեցէն վերջէ	15 4
Բերայի մէջ	—
Աւաւտուն բացուեցաւ	15 3
Բարձրագոյն գին	15 4
Նաւազագոյն »	15 3
Կէս օրին	15 4
Փոխառութիւն 1858) A. Սէրի Գ. Կ.	25 30
» 1862)	
» 1860)	
» 1863) B.	15 40
» 1872)	
» 1863)	
» 1869) C. »	15 4
» 1873)	

ԻՆՏԻՖԻԷ ԵԳԻԱՊԱԿԱՆ

Երեկ իրեկուն գոցուեցաւ	70 27
Այս աւաւտ բացուեցաւ Գ. Կ.	70 22 1/2
Կէս օրին	70 22 1/2

ԲԱԺՆԵՏՈՐՈՐ

Սօսիւթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 13
Քրէտի Ժէնէրալ..... » » Օսմ. »	6 5
Պանք տը Գոնա..... » » » »	—
Սոս. Շանտ է վալէօր..... » » » »	—
Բորամուէյ..... » » » »	280
Բոււէլիի երկաթուղի..... Ֆր.	35
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ..... »	—
Բաժնեկութուղի Լաւրիօմի..... »	55

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի..... դրշ.	100
Օ Ֆրանքոնց..... »	87 37
Անգլիական ոսկի..... »	110 15
Բօլ Իմպերիալ..... »	90 15
Քրիմից..... »	51 12
Իսլաւլի թղթադրամ..... »	9 23
» արծաթ..... »	89 30
Ֆիօրին..... »	8 35

Մէճ. արծ. (տարբ.)..... »	108 4
Վեցնոց..... »	102 30
Հինգնոց..... »	102 25
Մէթալիք..... »	97 30
Պղինձ..... »	—
Պղծադրամ..... »	—

ԵՐԲՈՎԱԿԱՆ ՊՈՐԱՍ

Լոնտոն, 8 Հոկտեմբեր, ժամ 5 վայր.	15 երեկոյ
Վեգլ. քօնսօրիտէ	100 1/16
Սաճ. » Սէրի Գ. բացուեցաւ	13 15/16
» » » գոցուեցաւ	13 15/16
» » » Ա.	25 1/4
» » » Բ.	15 1/4
» » » Գ.	13 7/8
Օթօման 1871.....	67 5/4
Փոխառութիւն 1877.....	81
Պանք Օթօման.....	9 5/4
Իսլաական փոխառ. 1873.....	93 5/8
Եգիպտական միացեալ (Ինիֆիէ).....	64 1/4
» աւանձն. (բրիվիլէժիէ).....	87 5/4
Տայրա Սանիէ.....	61 5/4
Տօմնիալ (փոխառ. Բօշիլտ).....	86
Հաւնգարական պարտաւճուղի 40/0.....	—
Փոխանակութիւն Բարիդի վրայ.....	—
Վ. Էննա, 8 Հոկտեմբեր, ժամ 4 երեկոյ	
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ.....	126 30
Օսմանեան երկաթուղի.....	17 20
Բարիզ, 8 Հոկտեմբեր, ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Իսլաական Ռանթ 4 1/2 0/0.....	108 90
» » 3 0/0.....	79 75
Օսմանեան քօնսօրիտէ Սէրի Գ. բացուեցաւ	14 02 1/2
» » » գոցուեցաւ	14 10
» » Սէրի Բ.	14 60
» » Գ.	14 10
Օսմանեան երկաթուղի.....	35 87 1/2
» Բէժի Բաժնեկութուղի.....	—
Պանք Օթօման.....	497 50
Գրէտի Լիօնէ.....	520
» Ֆօնսիէ.....	1285
Բաժնետոմս Լիօնի.....	1242 50
Սուէզի ջրանցք.....	1986 25
Ռուսական 5 0/0 1877ի.....	99
Իտալական Ռանթ.....	94 70
Եգիպտական միացեալ.....	325
Սպանիական (արտաքին).....	56 5/8
Բրիօրիթէ Բիւրք.....	348 75
50/0 Հեյլենական.....	290
Չէք Լոնտրայի վրայ.....	25 23

ԲԱՐԻԶ ԲԵՅԵ ՊՈՐԱՍ

Բարիզ, 8 Հոկտեմբեր, ժ. 40 վ. 30 երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....	108 72 1/2
Օսմանեան քօնսօրիտէ Սէրի Գ.	14
Եգիպտական.....	324 37 1/2

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.ԶԳ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34-րդ ՏԱՐԻ

1885 ՍԵՊՏԵՄԲԵՐ 28

ԹԻԻ 3759

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե.

Վերջընթեր հատուածին մէջ քանի մը հիւսիսային երկիրներու օրագրութեան վըրայ ընթացաւ մեր տեսութիւնը, եւ սլավական օրագրութիւնն ուրոյն շար մը կազմեց. սքանտինավեան տէրութեանց մէջ հըրատարակեալ միայն երեք թերթերու առուններ կրցանք յիշատակել(*), եւ Ռուսմա-

(*) Այսօր կ'աւելցնենք հոս ինչ ինչ ծանօթութիւններ զորս բարեհաճած է հաղորդել մեզ Մեծ Տիար Նորայր Բիւզանդացի Ստոքհոլմէն:

Christiania Intelligentsedler (Քրիստիանիայի լուրեր) լրագրին առաջին թիւն զոր յիշած ենք արդէն 1763 մայիս 25 ին սկսած է, նախ շատ փոքրադիր շաբաթաթերթ. այս լրագիրը մինչեւ հիմայ կը հրատարակուի: Հետեւեալ տարին սկսաւ մի ուրիշ թերթ որոյ խորթահայրն է բաղմամանկ բառերէ կազմուած անունը զանց կ'ընենք օրինակել, եւ կը շատանանք ըսելով թէ Պէտէնի թեմին ծանուցումն ներու մենավաճառն ունէր, եւ 1864 ին խափանուեցաւ կամ պատուութեան անցաւ մի փոխարինութեամբ: Ուրիշ թերթ մը, նմանապէս ծանուցումներու մեռաշնորհն ունեցող՝ երեւցաւ 1769 ին եւ ժամանակ մը դպրոցի մը սեփականութիւնը եղաւ: Պարբերական հրատարակութիւնը քննութեան ենթարկեալ էին ցորչափ տեւեց Դանիոյ հետ Նորվեկիոյ միութիւնը: Միայն երեք տարի, 1770-73 Շվեդիէնէի պաշտօնէութեան ժամանակ մամուլը կրցաւ ազատ

նիա կասեցանք. եւ որովհետեւ ամէն ճանապարհով կը տանի կ'ըսեն, որքան դիւրին բան Դանուբի եզերքէն Տիբերիսի ափունքը փոխադրուիլ:

Իտալիա երկար ժամանակ փոքր տէրութիւններու բաժնուած եւ ստէպլ յեղափոխութեանց թատր հանդիսացած երկիր մը ըլլալուն համար, ինչպէս քաղաքական պատ-

շարժիլ. բայց յետոյ նորէն խստացաւ օրէնքը հրատարակութեանց դէմ: 1814 ին Նորվեկիա բաժնուեցաւ Դանիայէն եւ այն ատեն հաստատուեցաւ մամուլի սղատութիւնն այդ երկրին մէջ. իսկ Դանիոյ գըրաքննութիւնը ջնջուեցաւ միայն 1848 ին: 1814 ին ամբողջ Նորվեկիոյ մէջ 7 թերթ կար. անկէ վերջէն որ լրագիրները բաղմացան, բարեբեցան: 1874 ին ամէն տեսակ հրատարակութեանց թիւն էր 403, որոց 42ը Քրիստիանիա կը հրատարակուէին: 1877 ին Նորվեկիոյ լրագիրներու թիւը հասած էր 173 ի որոց 121ը օրագիր եւ 52ը հանդէս էին:

Մեր բարեկամը Էմիլ Քայ անուն հեղինակի մը մի մատենիկը կը յիշատակէ, 1883 ին Ստոքհոլմ արդուած, որ կը խօսի Շուէտի լրագրաց վրայ, 1634 էն մինչեւ 1749. ըստ այսմ հեղինակի, առաջին լրագիրն չէ թէ 1763 ին այլ 1634 ին հրատարակեալ պէտք էր ըլլալ, բայց անունը չյիշատակեր: Թղթատեցի, կ'ըսէ այդ մատենիկը, յորում հին լրագիրներէ զանազան հատուածներ մէջ կը բերուին, եւ հետեւեալն որ քաղեալ է Ordinarie Stockholmske Post-Tijdsender լրագրին 1686 յունիս 9 թիւէն, իմ հետաքրքրութիւնս շարժեց, վստի որոյ կը թարգմանեմ. «Անցեալ էիւրակէ, յետ երեկոյեան ժամերգութեան, մի թուրք երիտասարդ եւ մի թուրք երիտասարդուհի մկրտեցան ի Գերմանական եկեղեցւոյ (Ստոքհոլմի) ի ներկայութեան Վեհափառ Թագուհւոյն (ամուսին Կարոլուս ԺԱ. Թագաւորին) եւ անուանեցան՝ առաջինն Alexander Gottlieb, երկրորդն Dorothea Sophia»:

Նոյն թերթ կը գրէ նոյն տարւոյ նոյեմբեր 8 թիւոյն մէջ թէ չորս թուրք կանայք մկրտուեցին նոյնպէս ի Ստոքհոլմ. Էմիլ Քայ կ'ըսէ ի ծանօթութեան. «Զգիտեմ թէ որով պատահմամբ այդ թուրք կանայք եկած են ի Ստոքհոլմ»:

մուծիւնը կնճռոտ է նոյնպէս եւ մամլոյ պատմութիւնը շատ հետաքրքրաշարժ չեւերելի . ի հարկէ պանազան ժամանակներ տարբեր մարդոց եւ ազդեցութեանց ներքեւ երկիր մը , ժողովուրդ մը պէտք է ունենայ իւր կարծիքներն եւ իղձերն արտայայտող գործիքներ . այսպէս է եղած Իտալիոյ համար . շատ թերթեր հրատարակուած , դադրած կամ խափանուած են . այլ մենք զանց կ'ընենք անոնց երկար ցանկը մէջ բերել :

Լրագիրները կ'երեւի որ վեչտասաներորդ դարու բերքն ըլլան այն երկրի մէջ . Գրիգորիոս ԺԷ քահանայապետն եկեղեցւոյ շանթերը կ'արձկէր անոնց դէմ . քաղաքական թերթերն յարգ չ'ունէին և խիստ ընդունեալ են թակալ էին . գրական եւ գիտական թերթերը չափաւորուեցան եւ իբրեւ հնադոյն հանդէսներ կը յիշատակուին Անլիսի Գրեյ Կոմսի Գրեյ Էնլիսի , 1604 . եւ քանադաւատական մի հանդէս Զեֆալու Գրեյ Էնլիսի 1710-1733 :

Իբրեւ լրագիր ամէնէն հինը կը համարին Լա Կոմիտի Գրեյ Զեֆալու (1797) , թէև այս թուականէն յառաջ վենետիկի մէջ լրագիր մը հրատարակուած ըլլալը յիշատակած ենք արդէն : Բայց իտալական մամլոյ զարգացման շրջանն աւելի նոր ժամանակներու մէջ կը սկսի . Ռէսպուբլիկանի ժամանակ Միլան կրօնական մեծ շարժման մը կեդրոն դարձեր էր , գրական եւ վիպական հեղինակաց միջեւ սաստիկ մրցում կար . առաջինները կը հիմնէին Պետիտիոն Էնլիսի 1816 ին եւ վերջինները Գոնիէ Էնլիսի , յորում կը փայլէր Միլիո Բելլիքքո : Գոնիէ Էնլիսի Պէրհայթ , Բէլլիքքո , Ռոսսի , Վիսքոնթի , Ռոմանեզի , Սիլվանիի նման անուանի խլմբագիրներ ունեցաւ : 1820 էն ետքը Միլանական դրականութիւնը շիջաւ . իւր զըլխաւոր գործիքը Գոնիէ Էնլիսի խափանուեցաւ և շարժումը փոխադրուեցաւ Ֆլորենցիո որ գերազանցեց զառաջինն :

Այն տուններն էր որ կը հրատարակուէր Անլիսի Էնլիսի , 1821 ին , Իտալիոյ լաւագոյն թերթը , զոր 1833 ին Ռուսիոյ եւ Աւստրիոյ դեսպաններն խափանել տուին : Քաղաքագէտը ամէնքն ալ գրեթէ կամ լրագրագետութեամբ կամ խմբագրութեամբ զբաղած էին . Գալուստ կը գրէր Թուրինի Անլիսի լը-

րագրոյն եւ Օթթիմի լրագրոյն մէջ . նոյնպէս ճուղեպի , մանաւանդ Մաթթինի մեծ դեր խաղացին նոյն կերպով . նորերուն մէջ Պոնիլի , Մինիէթի , Կուպէնաթի կը գրեն լրագիրներու մէջ յողուածներ :

Իտալիոյ պաշտօնական միակ թերթն է այժմ Լա Կոմիտի Գրեյ Էնլիսի , որ կը հրատարակուի ներքին գործոց պաշտօնատան խնամք ի Հռոմ : Իսկապէս կէս պաշտօնական թերթ չ'կայ , եւ այդ անունը հազիւ կրնայ տրուիլ կարգ մը թերթերու որոց խմբագրութեանը կը մասնակցին պաշտօնական մարդիկ կամ անոնց որ խմբակներու գործիքները կը համարուին : Այսպէս են Բոլլո Ռոմանո , Պ. Տէրրէթիսի թերթը . այսպէս էր Տէրրէթիսի մինչեւ այն օրն որ ընկաւ Մանչինի :

Իտալական լրագրութիւնը ծաղկեալ չէ . և ասոր պատճառ կը տրուի Իտալացւոց անտարբերութիւնը քաղաքական գործոց մասին : Վաճառականութեան եւ արուեստից վիճակն ալ յարմար չէ անոր զարգացման . ծանուցումներ եւ նիւթական չահերու վերաբերեալ հրատարակութիւններ մուտ չեն գտած իտալական լրագրութեան մէջ , որով եկամտի զխաւոր աղբիւրէ մը զրկուած կը մնան : Մեծ քաղաքաց մէջ կան թէպէտ բազմաթիւ թերթեր , այլ դժուարաւ կ'ապրին եւ հասարակութիւնը 1 սուէն (10 փրյ.) աւելի չ'ուզեր վճարել լրագիր մը գնելու համար :

Քաղաքական լրագիրներն ընդհանրապէս Թուրինոյ նպաստաւոր չեն . սակայն սկզբամբ հակառակ թերթեր չ'կան . այն խընդիրներուն մէջ որք ուղղակի Իտալիոյ չահերուն չ'են վերաբերի՝ իտալական թերթերն Փրանսական թերթերէն կը ներշնչուին , որք ամենէն աւելի տարածուածներն են թերակղզւոյն մէջ :

Մամլոյ ազատութիւնը խնդրոյ ներքեւ չկրնար դրուիլ . բայց իտալական օրէնքը կը պատուիրէ հսկել որպէս զի թագաւորին կամ արքունեաց դէմ նախատինք մը չ'ըլլայ . ո՛չ միայն ասանկ պարագայի մէջ , այլ երբեմն ալ կառավարական ձեւը փոխելու իղձեր արտայայտող լրագիրը , որք հանրապետական ուղղութիւն մը ունին , դատապարտութեանց ենթակայ կ'ըլլան :

Ամենէն աւելի տարածեալ թերթերն են ,

պաշտօնական թերթ մ'եղաւ, եւ Մօնիթօրը Ռօժ որնոր Վատիկանի միջազգային քաղաքականութիւնը կը պաշտպանէ եւ Ս. Պապէն նպաստ կ'ընդունի:

Իտալիոյ մէջ լրագրութիւնը ի պատուի չէ, բաղդատելով զայն Անգլիոյ, Ֆրանսոյի եւ Աւստրո-Հունգարիոյ լրագրութեան հետ. այսու ամենայնիւ նախապաշարում եւ հակիրճութիւն չկայ անոր դէմ՝ եւ հետեւապէս բաւական լաւ ընդունելութիւն մը գտած է կրնայ ըսուիլ:

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(ՎԵՊ ՏՓՂԽՄԻ ԿԵԱՆՔԻՅ)

(Շաբ. և Էքզ)

ԺԹ.

ՊԱՅՔԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՈՒԱԾԸ

Նիկիոյ որդեալ ժամին եկաւ, նորէն Վարդուհին «Եւրոպա» հիւրանոցը տարաւ, որովհետեւ Նիկիոյ երդուեց, որ միւս օրը իւր մօրը կ'ուղարկէր Օլիւկա խանութի մօտ խնամեւթեան:

— Ես հարուստ եմ, ասել էր Վարդուհին — հայրս ինձ եւ Գրիգորին կտակեց իւր ամէն ունեցածը:

— Եւ ո՞րքան կարծում ես որ լինի այդ ունեցածը:

— Մօտաւորապէս 20 հազար բուրլի, որոյ կէսն իմն է:

Մի րոպէ Նիկիոյ մտածեց ամուսնանալ Վարդուհւոյ հետ եւ իւր գումարի վրայ մի ամբողջ կոյտ էլ աւելացնել:

— Ի՛հ, մտածեց նա նորէն — ամուսնանա՞լ, երբ Վարդուհին առանց ամուսնանալու արդէն իմ կրնա է... եւ թողեց ամուսնութեան միտքը:

Վարդուհին վերջին դէպքերից ի վեր, միշտ փախնում էր Հռիփսիմէից, որովհետեւ յիշում էր նորա ամէն մի խօսքը:

— Նա սիրում է Նիկիոյն, մտածում էր Վարդուհին եւ ատել սկսեց Հռիփսիմէին, որովհետեւ ինքն էլ նախանձ ունէր:

Բայց Հռիփսիմէն նկատեց, որ Նիկիոյ

իրենից միշտ փախնում է, սակայն մի քանի անգամ տեսել էր նորան իրենց փողոցումը. եւ իրաւ պարոն Նիկիոյ չէր զբաղւում շաբաթը մի քանի անգամ Վարդուհին հիւրանոց տանել, անցկացնել նորա հետ մի քանի զուարճալի ժամեր եւ միշտ խոստանալ յետագայ օրը իւր մօրը խնամեւթեան ուղարկել, բայց այդ հետեւեալ օրերը չէին վերջանում, նմանում էին Ռուսաց դատաւորների «զավտրա» ին (վաղը): Վարդուհին սկսեց կասկածիլ, որ Նիկիոյ խաբում է իրեն:

Իսկ Հռիփսիմէն միտքը դրաւ թէ՛ Նիկիոյն ոտը կտրել Վարդուհիից եւ թէ՛ Վարդուհիի յոյսը Նիկիոյից. այս կը լինէր պայքարի երկրորդ քարը, իսկ երրորդով նա մըտադիր էր ջախջախել:

Անցաւ այդպէս մի ամիս, ո՛չ ոք մօտեցաւ Վարդուհին կնութեան ուղեւ, որովհետեւ ամբողջ Տիփսիսը գիտէր, որ աղջկը կրն է: Օլիւկա խանութը հիւանդ պառկել էր ցաւից եւ ցանկանում էր մեռնիլ, այլ եւս չը շարունակել իւր արատուած կեանքը եւ հետեւապէս Վարդուհին ա՛յն աստիճանին հասաւ, որ Նիկիոյն ամբողջ դիւերներ էր նուիրում իւր սենեակում, մինչդեռ կողքի սենեակում իւր մօրաբոյրը մեռնում էր: Վարդուհին այժմ համարձակօրէն սիրաբանում էր, ընտանեակներ էր յաճախում եւ հրապարակ դուրս գալիս Նիկիոյի հետ, որին բոլոր ուսանողները շնորհաւորում էին մի այդպիսի գեղեցիկ որս ձեռք ձգած լինելուն առթիւ. բայց երբ ամուսնութեան «հետեւեալ օր»երը ավաներ եղան, Վարդուհին զգաց որ խաբուել էր, բայց արդէն ուշ էր, նա սովորել էր այդ կեանքին:

Հետեւապէս Նիկիոյ շարունակում էր, այժմ բոլորովին համարձակ, իւր այցելութիւնները. իսկ Հռիփսիմէն կատաղում էր, որ Վարդուհին ամուսնանալու չէ ստիպում Նիկիոյին: Մի օր էլ նա մօտա Օլիւկա խանութի մօտ եւ երկարօրէն նորա հետ խօսելով յայտնեց, որ Վարդուհին արատաւր մի երիտասարդ է որ ամէն գիշեր աղջկայ մօտն է գալիս եւ հարուստ է. ի միջի այլոց նա խորհուրդ տուաւ զրգուելու Վարդուհւոյն Նիկիոյն ստիպել ամուսնանալու իւր հետ: Այդ հնարքը յաջողուեցաւ. Օլիւկան կան-

չեց Վարդուհիին, լաց եղաւ, ասաց որ կը մեռնի անիծելով նորան եւ գրգռեց գորանով Վարդուհիին, որը մի երեկոյ յայտնեց Նիկոլին թէ ժամանակ էր վերջապէս խընամեթստութեան դիմելու:

Իրաւ, որ ժամանակ էր, որովհետեւ միւս օրը արդէն նա զգաց, որ մայր է եւ դորանով աւելի տաք վերաբերուեց ամուսնութեան գործին:

Նիկոլը միմւայ եւ միւս օրը չ'երեւեցաւ. Վարդուհիին լաց լինելով սպասեց միւս գիշեր, բայց Նիկոլը չ'երեւեցաւ, որովհետեւ նա արդէն գտել էր մի ուրիշի, որը չէր պահանջում նորա ամուսինը լինել . . .

Վարդուհիին լաց էր լինում ամբողջ օրը, նա սիրում էր Նիկոլին, զղջաց որ ամուսնութիւն էր պահանջել եւ կամեցաւ Նիկոլին նորէն տեսնել. պատելու ելաւ մի օր այգիում, նստեց մի նստարանի վրայ, յանկարծ երիտասարդին տեսաւ մի ծառի տակ, մի ուրիշ կնոջ կողքին . . .

Վարդուհիի սիրտը նախանձը սկսեց կրծել, նա նուաղած ընկաւ:

Նորան տուն տարան եւ Վարդուհիին անկողին մտաւ. նախանձից հիւանդացաւ:

Այդ միջոցին Հռիփսիմէն գնացել էր Նիկոլի մօր մօտ եւ պատմել էր թէ իւր որդին կամենում է ամուսնանալ մի աղջկայ հետ, որը չատերի անկողինն է մտել. ծերունի մայրը հաւատաց եւ սկսեց մազերը փետտել:

— Նիկոլ, գոչեց նա, երբ երիտասարդը տուն մտաւ — ես կը մեռնիմ եթէ դու այդ աղջկայ հետ ամուսնանաս:

— Ո՞ր աղջկայ հետ, հարցրեց զարմացած Նիկոլը:

— Վարդուհի՞ է, ի՞նչ է, այդ պոռնիկ կնոջ հետ . . .

— Ի՛հ, ասաց պաղութեամբ Նիկոլը ուսերը շարժելով — ես ոչ երբէք ամուսնանալու դեռ միտք ունիմ, ես դեռ փոքր եմ:

Մայրը միամտուեցաւ, իսկ Նիկոլը տեսնելով որ լուրը մինչեւ իւր մօր ականջն էր հասել, էլ այնուհետեւ Կանիւնայեա փողօցիցն իսկ չէր անցնում: Նա շուտով մոռացաւ Գերմանիա գնալու միտքը, սկսեց չալլ եւ դատարկապարտ մի կեանք, բազմաթիւ սիրուհիներ ունեցաւ, չալլում էր փո-

ղեր եւ այսպէս նա հետզհետէ քմահաճութեան էլ ենթարկուեցաւ, քմահաճութեան համար սկսեց 100 ներ մտնել: Երբ Նիկոլը ճաշի էր նստում մի որ եւ իցէ հիւրանոցում, միշտ մի քանի կին սեղանակից ունէր. առաւօտեանները տնից դուրս էր գնում, երեկոյանները դառնում եւ շատ անգամ իսկ գիշերը դուրս էր մնում . . .

— Արձակենք երրորդ քարը . . . մոտօճեց Հռիփսիմէն, երբ այդ բոլորը լսեց:

Ի.

ԲԱՐՈՅՍԱՆ ՍՊԱՆՈՒԹԻԻՆ

Վարդուհիին առողջացաւ, բայց կորաւ նորա աչքերի սքանչելի փայլը, նորա դէմքի գեղեցկութիւնը. նա այժմ մի նիհար աղջիկ էր, տգեղ մը որի սիրտը բուժուելուն պէս նոյն գեղեցկիւր կը լինէր: Նա երբէք դուրս չէր գնում տնից, հակառակ իւր մօրքոյ յորդորներին, որը առողջացել էլ եւ կարգի էր դրել իրենց գործերը:

Գրիգորը ուսումնարանից դուրս էր ելել եւ Սիմոնի խանութը բաց անելով, շարունակեց նորա գործերը. այսպէս նորա դեռ եւս հարուստ էին. իսկ Նիկոլը գնում էր դէպի կորուստ եւ տարուայ վերջը պիտի տեսնէր, որ իւր գումարի կէսը պակասում է:

Գարունը մօտեցաւ շուտով. մի գեղեցիկ երեկոյ, Տ. Հռիփսիմէն հագաւ իւր վերարկուն եւ մի կառք նստելով, գոռաց կառապանին.

— «Մուշաղփսկի» անառականոց. բայց երբ կառքը Գօլօփինսկի Պրօսպեկտը իջաւ, Հռիփսիմէն խօսեց ինքն իրեն.

— Այնտեղ բարձր է, աւելի ստոր տեղ պէտք է, եւ նա հրելով կառապանին ասաց — Քչիր Հերակլի բաղնիքը: Կառքը մեկնեցաւ:

Տփլիսի ջերմուկ բաղնիքները շրջապատուած են հարիւրաւոր մանր անառականոցներով. այնտեղից անցնողը եթէ մի անգամ գլուխը բարձրացնէ, կը տեսնէ վերում, պատշգամբից մինչեւ կէս մէջք ցած կախուած ներկած անճոռնի կանայք. իսկ եթէ մօտենայ Հերակլի բաղնիքին, մտնէ այնտեղի նեղ փողոցը — ձախ կողմի փողոցը — նորա

աչքին մի ուրիշ տեսարան կը ներկայանայ :

Մանաւանդ երբ մութը կոխել է , անցորդը առաջին իսկ քայլին կը տեսնէ մի քանի բաց դռներ , որոնց դրսում եւ ներսում նստել են կանայք , ոմանք պառկած , ոմանք երգելիս , ոմանք նստած եւ որք հրաւիրում են ամէն լեզուով ... քիչ անցիր— կը տեսնես զէպի վեր՝ բարձրացող սանդուխներ , որոնց առջեւում խոնուել են կանայք , փողոցի երկու կողքին նստած , կանգնած , երգում են եւ կամ իրենց ձեռքի փողերի «կարմեն»ին ածում ,⁽¹⁾ կանչում են... անցիր փողը ինչ էլ , նորէն նոյն տեսարան , բայց այս անգամ պարսիկ կանայք :

Դորան հետեւում է «Դաբբախանան»⁽²⁾ իսկ նորա զէմ ու զէմ մի պատշգամաւոր տուն կայ , որոյ սանդուխներ թէեւ լուսաւորուած են , բայց շէմքին վրայ ո՛չ ոք կայ , այլ միայն վերը լուսամուտում նստած մի քանի կանայք են երեւում :

Հռիփսիմէի կողքը կանգ առաւ այդտեղ . նա ցած թռաւ , հրամայեց կառքին սպասել , սանդուխներից բարձրացաւ եւ մի փողերիկ սրահ մտնելով զէմ առ զէմ եկաւ երեք պոռնիկների , որոնք զարմացան տեսնելով , հակառակ սովորութեան , մի կին այցելու :

—Ո՛ւր է «խաղէյկա»ն (տիրուհին) հարցրեց Հռիփսիմէն կանանց :

—Իւր սենեակին է :

—Ինձ նորա մօտ տարէք :

Կանանց մէկը առաջ անցաւ եւ մի դուռ բաց անելով թոյլ տուաւ Հռիփսիմէին ներս մտնել մի պառաւ կնոջ մօտ , որը ծուլութեամբ պառկել էր մի բազկաթուռի մէջ եւ ննջում էր . դրան բացուելու ձայնը նորան զարթեցրեց , նա մի զարմացական ձայն հանեց եւ գոչեց .

—Հռիփսիմէ՛ , այստե՞ղ , ի՞նչ գործ ունիս :

Հռիփսիմէն սենեակի դուռը փակեց եւ նստաւ :

—Խօսելիք ունիմք քեզ հետ :

—Արդեօք այստե՞ղ գալու միտք ունիս :

—Ի՛հ , ասաց Հռիփսիմէն—դրսերումը քիչ կայ , որ դամ այս բանտումը :

—Լաւ ուրեմն էլ ուրիշ ի՞նչ գործ կայ :

—Ուզում եմ քեզ մի սիրուն գերի բերել :

—Սիրո՞ւն , գոչեց պառաւը փափելով— բե՛ր , բե՛ր , արդէն կանայքս քիչ են :

—Ես էլ այդ տեսայ , նորա համար քեզ յիշեցի , բայց չափ սիրուն է , լաւն է հա՛ա :

—Լա՛ւ , լա՛ւ , գրաւի՞չ է :

—Սքանչելի գրաւիչ , հաստատ գիտեմ որ նորան տեսնողը այլ եւս ուրիշ տեղ չի գնալ , սաղ այս կողմերը նորա նման մէկը չը կայ :

—Թա՛նգ է :

—200 բուբլի :

—Շատ է , ես աղքատ եմ :

—Դու գիտես , կը գնամ Կատինկայի մօտ , նա հարուստ է :

—Ձէ՛ , չէ՛ , բե՛ր , պարտք կ'անեմ կը տամ :

—Լաւ ուրեմն , բայց նա չի իմանում ի՞նչ է այստեղ , ուստի սկզբում հետը գզուշութեամբ պիտի վարուէք , չը թողէք մի բոսկէ իսկ դուրս գնայ , ապա թէ ո՛չ մեծ վտանգի մէջ կ'ընկնէք . . . մեծ տեղից է :

—Լա՛ւ , լաւ , անհոգ կայց , ե՛րբ կը բերես :

—Վաղը երեկոյ :

Եւ նա շտապով դուրս եկաւ , նորէն կառքը մտաւ եւ մեկնեցաւ :

Այժմ՝ պէտք էր զոհը կարթին մօտեցնել , կարթը պատրաստ էր :

Հռիփսիմէն չուշացաւ այդ անելու . նա ցոյց տուաւ թէ մոռացել է անցեալն եւ միւս օր կէսօրին արդէն խօսում էր Վարդուհւոյ հետ , իսկ երեկոյան նորան պտոյտի դուրս դալու հրաւիրեց :

Վարդուհւին անկարելի եղաւ համոզել տնից դուրս դալու :

—Կառքով կը գնանք , ասաց Հռիփսիմէն սիրալիր ձայնով—խե՛ղճ աղջիկ , կը մեռնիս , եթէ մի քանի օր էլ տունը նստիս , գնանք , չես գղջալ :

—Թող մեռնիմ , պատասխանեց Վարդուհին դառնութեամբ եւ համաձայնուեց :

Հռիփսիմէն նորան կառք նստեցրեց եւ անառականոցի առջեւ լիցան :

—Ո՛ւր ենք գնում , հարցրեց Վարդուհին Հռիփսիմէին . վերջինս պատասխանեց , որ իւր բարեկամուհւոյ տունը , որը Յ աղջիկ-

(1) Ձեռքի փողերի հարմնեքա .

(2) Խաղախորդարան .

ներ ունէր . մոցրեց նորան , մի պատճառաբանութեամբ դուրս գնաց եւ Վարդուհին կարթի մէջ ընկաւ յաւիտեան . . .

Իսկ Հռիփսիմէն դուրս եկաւ այնտեղից 200 բուբլին գրպանը դրած , ապա դարձաւ տուն , ընկաւ մահճակալի վրայ եւ քրտինքը սրբելով ասաց .

—Մեռաւ նա , իսկ միւսին ես այժմ ատում եմ . . .

Ի՞նչ արաւ Օլիւկան . Հռիփսիմէն նորան յայտնեց , որ Վարդուհին մինչեւ բակը բերեց եւ պիտոյք զգալով հարկաւորութեան գնաց , բայց դուրս ելաւ , նորան չը տեսաւ եւ մտածեց որ ներս մտած կը լինի :

Օլիւկան ի զուր ամբողջ Տփլիս տակն ու վրայ անել տուաւ , ի զուր Գրիգորը շատ փնտուեց . առաջինը լաց եղաւ եւ միշտ լաց էր լինում , իսկ երկրորդը ասում էր .

—Երանի խեղդուած լինի . . . իւր արատը կը սրբուի :

ԻԱ.

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(Ա. ԵՐԵՔ ԳԼԽԻ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ)

Կարծում ենք , որ ժամանակ է այլ եւս դառնալ առաջին երեք գլուխների շարունակութեան , որին մենք այնքան յանկարծ կիսատ թողինք : Կամ այնպէս ցոյց տուինք , որ վերջացրինք . ո՛չ , շարունակութիւն ունի եւ եթէ ընթերցողներից գայթակղողներ են եղել նորա պարզութեան վրայ , թող փոքր ինչ ներողամիտ լինին , որովհետեւ վերքը կատարելապէս եւ արմատից չը պեղած—բուժելը անկարելի է ,

Գառնանք ուրեմն Մարթայի եւ Նիկոլի սենեակին :

Շուտով լուսացաւ , Նիկոլը փոքր ինչ շուռ մուռ եկաւ , նորէն քնեց կէս ժամի չափ եւ երբ զարթնեց , արեւի շողքը լուսամուտից ներս էր զարկել եւ Մարթան մէջքը նորան դարձրած նստել էր բաց լուսամուտի մօտ մի աթոռի վրայ . նա ասեղնադորձում էր արագութեամբ մի «սարաֆան» . այդ մի տեսակ ծաղկեկար կտոր է , որոնցից հագնում են առ հասարակ ուսու

կանայք եւ մանաւանդ հասարակաց կանայք :

Նիկոլը տեսաւ այդ , նախ զարմացած նայեց եւ ապա հարցրեց պառկած տեղից .

—Մի՞թէ , Մարթա՛ , դու «սարաֆան» ես հագնում :

Մարթան գլուխը դարձրեց եւ Նիկոլը մի զարմացական ձիկ արձակեց , տեսնելով , որ Մարթայի դէմքը բոլորովին փոխուած էր եւ նախորդ օրուանից աւելի հիւսնալի կարմիր թշեր եւ սիրուն սեւ աչքեր ունէր :

—Եթէ ներկ է քսել , մտածեց Նիկոլը—ներկով չէ՛ կարելի այդ աստիճանի գեղեցկանալ առանց «պարկիմասեր (1)» ի օգնութեան . . . տեսնենք . . .

—Ո՛չ , պատասխանեց Մարթան մի սիրուն ժպիտով—իմ աղախինիս համար է սա :

—Ուրեմն աղախին՝ն էլ ունիք դուք , հարցրեց Նիկոլը իջնելով մահճակալից :

—Ի հարկէ եւ ծառայ իսկ , ես հարուստ եմ . հագնուիր եւ ջուր կը բերեն քեզ :

Նիկոլը սկսեց հագնուիլ իւր շուրջի առարկաները դիտելով . Մարթան գործը աթոռի վրայ դրաւ եւ դառնալով սկսեց Նիկոլին նայել , յետոյ գլուխը խորհրդաւորապէս թափահարեց , մի քայլ առաւ դէպի հագնուած երիտասարդը , ձեռքերը կրծքի վրայ ծալեց եւ ասաց նորան մի պատկառանք ազդող վեհափառութեամբ .

—Այժմ կրկնէք երէկ իրիկուայ խօսքերը :

Ի՞նչ խօսքեր , ասաց Նիկոլը աշխատելով ժպտելու մէջ ծածկել իւր շփոթութիւնը եւ կարմրելը :

Մարթան վարի շրթունքը երկնցուց մի արհամարհական ժպիտով , կրունկի վրայ դարձաւ , սեղանի մօտ գնաց եւ

—Այդպէս շուտով մոռացաք . . . ես արդէն կասկածում էի , ասաց լրջութեամբ , դարձաւ եւ սեղանի վրայից դանդաղ վերցնելով հնչեցրեց :

Ներս մտաւ մի տգեղ աղախին եւ բերեց լուացուելու ջուր :

Նիկոլը լուացուեցաւ , սրբուեց եւ սկսեց գլուխը սանտրել , մինչդեռ Մարթան նորէն իւր գործը ձեռք առած շարունակում էր :

(1) Սափրիչ եւ ներկագործ :

Երիտասարդը մօտեցաւ եւ նստեց նորա մօտի աթոռի վրայ :

—Թէ՛յ բե՛ր, հրամայեց Մարթան աղախինն եւ վերջինս դուրս գնաց :

—Մարթա՛, ասաց Նիկօլը նորա ձեռքը բռնելով — այս առաւօտ որքա՛ն գեղեցիկ ես :

—Մի՛ խռնիր գործս, գիտեց խոտութեամբ Մարթան եւ ձեռքը քաշելով շարունակեց գործել :

—Լա՛ւ, ասաց Երիտասարդը—երեւի նեղացել ես ինձնից :

—Ե՛ս, երբէ՛ք, պատասխանեց Մարթան առանց գլուխը բարձրացնելու—ինչո՞ւ պիտի նեղանամ, իրաւունքդ ստացաք եւ այժմ կարող էք գնալ :

—Ինձ վաճառում ես :

—Դեռ թէ՛յ կը խմէք եւ յետոյ կը գընաք, աւելացրեց կինը :

—Շատ լաւ, ասաց Նիկօլը—ես է՛րբթամ մեր տուն թէ՛յ խմելու, եւ նա կանգնելով վերցրեց իւր գլխարկը, մօտեցաւ տիկնոջ, ուղեց ողջունել, բայց դուռը բացուեցաւ եւ աղախինը թէ՛յի գաւաթները ձեռքին ներս մտաւ :

—Սպասէք թէ՛յի, ասաց Մարթան երիտասարդին նայելով—չտապում էք :

—Ո՛չ, պատասխանեց երիտասարդը եւ գաւաթը առնելով, ոտի վրայ կանգնած սկսեց խմել :

Աղախինը միւս թէ՛յի գաւաթը աթոռի վրայ դրաւ եւ դուրս գնաց :

Տիրեց մի րոպէ լռութիւն, Նիկօլը մինչեւ գաւաթի կէսը խմեց, իսկ Մարթան դեռ եւս գաւաթը ձեռք չէր առել եւ շարունակում էր արագութեամբ գործել :

—Մարթա՛, ասաց վերջապէս Նիկօլը :

Մարթան դադարեց եւ գլուխը բարձրացրեց . երիտասարդը տեսաւ թէ՛ ինչպէս երկու կաթիլ արցունք դուրս եկան նորա գեղեցիկ սեւ աչքերից եւ ընկան նուրբ կարմիր այտերի վրայ :

Նիկօլը դողաց, թէ՛յի գաւաթը դրեց աթոռի վրայ, մօտեցաւ Մարթային, չուրեց նորա առջեւը, բռնեց նորա երկու ձեռքը եւ սկսեց համբուրել :

—Մարթա՛, լա՞ց ես լինում :

—Դու վա՛տ երիտասարդ ես, միմեջեց Մարթան :

—Ե՛ս, այո՛, վա՛տ եմ, որովհետեւ չը թողիր ինձ կրկնելու որ ես քեզ սիրում եմ . . . անդո՛ւթ, ինչո՞ւ չես ասում որ սիրում ես ինձ :

—Ձե՛մ կարող, Նիկօ՛լ, սիրտս ուրիշի եմ տուած . . .

Երիտասարդը կատաղութեամբ ոտքի կանգնեց :

—Ս՛ ա՛ . . . ասաց նա—ուրեմն նորա համա՞ր հոսեցրիք ձեր աչքերից այդ երկու կաթիլը :

—Այո՛ :

—Եւ ո՞վ է նա, որ սիրուել է ձեզնից, ո՞վ է այդ անգութը որ ստիպել է ձեզ արտասուել, երիտասարդ է . . . գեղեցիկ է :

—Երկու տարի է, որ նորան չէի տեսել . . . նա անդո՛ւթ է . . . ինձ հրապուրեց, երդուեց սիրել, ամուսնանալ ինձ հետ, բայց խաբեց եւ մոռացաւ ինձ . իսկ ես . . . ես միշտ, մինչեւ այսօր միայն նորան եմ սիրել եւ ոչ ոքի :

Նիկօլը դողաց իւր անցեալը յիշելով :

—Ուրեմն ինձ չէ՞ք սիրում . . .

—Ո՛չ, անկարող եմ, Նիկօ՛լ . կուզէի սիրել, մինչեւ իսկ շատ կը փափագէի . . .

Երիտասարդը ընկաւ նորա գրկում :

—Հրեշտա՛կ ես . . . Մարթա՛ . . . սիրե՛ր, ի՞նչն է արգիլում քեզ սիրել . . . այն երիտասարդը, որը մոռացաւ քեզ եւ ուրիշին սիրեց :

—Այն երիտասարդը ո՛չ ոքի սիրեց եւ ո՛չ իսկ ինձ, բայց նա մոռացաւ ինձ . . .

—Ուրեմն սիրիր ինձ եւ փորձիր թէ՛ ես կը մոռանա՞մ քեզ :

—Կուզէի սիրել . . . բայց չեմ կարող . . . ես ատում եմ բոլոր մարդկանց :

Նիկօլը թողեց նորան եւ արագութեամբ դատարկեց թէ՛յի գաւաթը :

—Մնաք բարեւ, ասաց նա եւ գլխարկը վերցրեց—եթէ չէք կարող սիրել, ես բռնութեամբ չեմ սիրվում, մնաք բարեւ . . . եւ նա քայլ առաւ հեռանալու :

Մարթան ձգեց ձեռքի գործը, վեհափառութեամբ կանգնեց, ճկոյթի ծայրով սրբեց աչքի արտասուքը եւ ասաց .

—Կանգնիր, Նիկօ՛լ . . .

Երիտասարդը կանգ առաւ եւ դարձաւ :

— Իսկ եթէ սիրեմք քեզ, հարցրեց Մարթան— ի՞նչ կը զոհեմ սիրոյս :

— Օհ, ամէն ի՞նչ որ ունիմ, գոչեց Նիկոյը մօտենալով նորան :

— Բռնիր ձեռքս, ասաց Մարթան դըրկելով նորան— ես քեզ սիրում եմ . . .

Եւ նա շրթերը Նիկոյի շրթերին մօտեցրեց, յետոյ թողեց նորան իւր գրկից եւ ասաց լուրջ դէմքով.

— Կարող ես իմ ամուսինը լինել :

— Ե՛ս, գոչեց զարմացած Նիկոյը— եւ մի կնոջ ամուսին :

— Այո՛, մի կին, որը իւր կեանքի մէջ երկրորդ անգամն է սիրում մի երիտասարդի, մի կին, որը իւր 10,000 բուբլին գնում է ըստ օրէի տակը . . . մի կին, որը գեղեցիկ է եւ որը իւր սիրողին է տալիս իւր սիրտը :

Նիկոյը կարմրելով թողեց գլուխը կրծքի վրայ :

— Նահանջում ես, Նիկո՛ւ, հոգ չէ՛, նահանջիր վատի նման, հեռացիր գնա՛ւ եւ պարծեցիր, որ մի կնոջ եւս հրապուրեցիր խաբերալուծեամբ, մի բսանամեայ կնոջ անպատուեցիր վատուծեամբ եւ նորա հետ ամուսնանալու քաջութիւնը չունեցար . . . գընա՛, ի՞նչ ես կանգնել. ես գիտէի, որ քեզ նման մի փաշած երիտասարդ անկարող է սիրել, այլ միայն խաբել, լկեղ անմեղներին եւ զուարճանալ նոցա արտասուքը եւ վըշտերը տեսնելով . . . գնա՛ :

Եւ նա դարձաւ եւ ընկնելով մահճակալի վրայ, գլուխը ծածկեց ձեռներին մէջ :

Նիկոյը գտնվում էր անտանելի դուրսեան մէջ. անպատուած մի կնոջից եւ իբր վատ եւ խաբերայ պիտի դուրս գընար նա այնտեղից. իսկոյն նորա մոքին եւ կան իւր բոլոր անպատուած աղջիկները եւ խաբած կանայքը, մի սարսուռ անցաւ ամբողջ մարմնի վրայ եւ կոթնեց պատին չընկնելու համար :

— Մարթա՛, ասաց նա աղաչական ձայնով— ներիր ինձ :

Ի՞նչ .

ՊԵՏՔ Է ԱՍՈՒՍԵԱՆԱԼ

Մարթան այդ ներումին առանց նշանակութիւն տալու, բարձրացաւ, նստեց եւ

դառնալով կանգնած երիտասարդին ասաց .

— Կ'ուզե՞ս, Նիկո՛ւ, որ պատմեմ քեզ թէ դու ո՞վ ես եւ ի՞նչ է ըստ պատմութիւնդ :

— Ա՛հ . . . գոչեց զարմացած Նիկոյը— գուցէ իմ մասին լսել ես :

— Բայց դիտեմ մի՛ պատմութիւն, որը երկու կամ չա՛տ չա՛տ երեք անձինք զիտեն :

Նիկոյան դուրաց :

Մարթան կանգնեց նորա գէմ մարդարէուհին, սպառնալիք եւ անէծք կարդացողի նման, պարզեց վեհափառութեամբ իւր ցուցամատը եւ ասաց խորխոր ձայնով.

— Սորանից երեք տարի առաջ մի խաղաղ անակի մէջ մտար, այնտեղ ապրում էր մի հրեշտակ, դու հրապուրեցիր նորան, ամուսնութեան խօսք խօսեցիր եւ անպատուեցիր անգթօրէն, ինչպէս անում ես այս երեք տարուայ ընթացքումը. բայց գիտե՞ս թէ ինչ եղաւ այն աղջիկը— Վարդուհին . . .

— Ա՛հ, Վարդուհին, գոչեց երիտասարդը դողալ սկսելով— յիշում եմ . . .

— Յիշում ես, բայց գիտե՞ս թէ ի՞նչ եղաւ Վարդուհին. վշտից մեռաւ նա եւ նորա տեղը մի պուռնիկ ծնաւ, պուռնիկ, որին դու գլորեցիր այդ հիմնարկութեան մէջ . . .

Նիկոյի մէջքից մի քրտինքի հոսանք անցաւ. նա յիշեց Վարդուհին, յիշեց թէ ինչպէս նորան անպատուեց, խաբեց եւ շուտով մոռացաւ. կոթնեցաւ աթոռին, ոյժերը սպառուեցան, դէմքը գունաթափուեց եւ կարծես «վատ» գոռացին նորա ականջն ի վեր : Մարթայի կատաղի աչքերը սպանում էին նորան :

— Մարթա՛ . . . գոչեց նա խռպոտ ձայնով— բաւական է, ես գղջացել եմ . . .

— Շա՛տ ուշ, միմուաց Մարթան— չա՛տ ուշ, երբ Վարդուհին իւր պատիւը փողով էր ծախում եւ երբ մի գիշեր իսկ դժուհիւր եղար նորան, չարտեցիր նորա երեսին մի հինգ բուբլանոց եւ դուրս գնացիր, իսկ միւս գիշերը մի ընկերոջդ յանձնեցիր նորան, ա՛հ, Նիկո՛ւ, Վարդուհին չա՛տ լաց եղաւ, անիծեց իւր ծնունդը, բայց չանիծեց քեզ եւ միշտ սիրում է քեզ . . .

— Ո՛ւր է նա, հարցրեց երիտասարդը յուզմամբ— ես կ'աղատեմ նորան այն տեղից :

—Կ'ազատես ի՞նչ կ'անես . մի երկու օր էլ կը պահես , ապա կը խառնես նորան այն կանանց , որոնք փողոցներում են ծախում , աւելի վատ . եւ այդ բոլորի՛, բոլորի պատճառը դո՛ւ ես , դու վա՛տ ես , վա՛տ ես ծնունդ եւ վա՛տ կը մեռնիս . . .

Եւ նա դարձաւ ու պատրաստուեց սենեակից դուրս գնալու , կանգ առաւ նորէն չէմքի վրայ , պարզեց նորան իւր ձեռքը եւ գոչեց .

—Գնա՛, քո զոհերիցդ մէկն էլ ես եմ . . . ինձ էլ հրապարակի վրայ ձգեցի՛ր , դնա եւ պարծեցիր . . .

Նիկօլի դուռթիւնը անկարագրելի էր . նա դատարկապորտ էր , բայց վա՛տ չէր . իսկ մի կին իրեն վատ կոչեց . ծնկները կթոտեցան եւ եթէ ձեռքը աթոռին չը տանէր , անպատճառ կ'ընկնէր :

—Մարթա՛, գոչեց նա ազաչանօր — Լըսի՛ր ինձ . . .

—Ի՞նչ ունիս ասելու , ասաց կինը արհամարհութեամբ—իրաւունքդ ստացել ես , դնա եւ աչքիս այլ եւս աչխատիր չերեւելու . իսկ ես , որին դու Աստուծոյ եւ դըժոխքի անուամբ քու կինդ անել խոստացար , ինչպէս միւս բոլորներին , ես էլ վարդուհին կը դառնամ , ես էլ վաղը մի ուրիշին կ'ընդունիմ . . .

—Ա՛հ , գոչեց կատաղութեամբ Նիկօլը—չը պիտի ընդունիս , ես չեմ թողնել , ես կը խեղդեմ քեզ մօտ եկող առաջին երիտասարդին . . .

—Հա՛, հա՛, ժպտեց դառնութեամբ Մարթան եւ ներս եկաւ , սենեակի դուռը փակելով . նախանձը քործում է քո մէջ քան թէ սէրը . . . բայց վարդուհին էլ նախանձու զոհ դնաց . . . դու էլ զոհուիր այդ մութեան :

—Ա՛հ , մի յիշէ՛ք այդ աղջկայ անունը , գոչեց Նիկօլը դէմքը ծածկելով :

—Ձը յիշե՛մ . . . խեղճ աղջիկը արդէն բարոյապէս մեռաւ անյիշատակ . արտասուելի է նա եւ ես , որոնք քո զոհերդ ենք . . . դնա՛, ինչո՞ւ ես կանգնել :

—Ես քեզ սիրում եմ , Մարթա՛, ինձ դժուար է այստեղից դուրս գնալ :

Եւ իրաւ Նիկօլը կարծես մաքնիսացած էր . Մարթայի սքանչելի դէմքը , վեհանձն

չարժուածքը եւ խօսքերը քարացրել էին նորան , նա դիւթուած էր :

—Սիրո՞ւմ ես , ծիծաղեց Մարթան — եւ կեանքիդ մէջ քանի՞ անգամ ես սիրել :

—Այս երկրորդ անգամն է :

—Առաջինն Վարդուհին՛նն է , հա՛, հա՛, հա՛, դու Վարդուհին սիրո՞ւմ էիր եւ թոյլ տուիր նորան Շէյթան փողոցի անառականոցը մտնել , թոյլ տուիր Հոխիսիմէին իւր կատաղութեան եւ վրէժի՞ն զոհել այդ աղջիկը . . .

—Հոխիսիմէ՞ :

—Այո՛, ա՛յն կինը , որը կատաղաբար սիրում էր քեզ եւ որը այսօր մի անառականոց ունէ ձեռքին , լաւ արհեստ է գտել եւ դորա՛ պատճառն էլ դու ես :

—Մարթա՛, գոչեց երիտասարդը յուսահատութեամբ եւ նորան մօտենալով — թո՛ղ այդ խօսքերը , մօա՛յլ են . . . խենթացնում են ինձ . . . ցնդել եմ ուզում . . . գլխա՛ ինձ վրայ , չէ՞ որ կին ես . . .

—Ա՛հ , ցնդե՞ւմ ես , ասաց Մարթան և բռնելով նորա ձեռքերից , ուղղակի նորա աչքերի մէջ սկսեց նայիլ—Նիկօ՛լ , սիրո՞ւմ ես ինձ :

—Այո՛, Մարթա՛, անկեղծ եմ ասում որ սիրում եմ :

Եւ նորա ձայնը անկեղծութիւն էր արտայայտում :

—Իսկ այդ սիրոյն կը զոհե՞ս ամենայն ինչ , կ'ուզե՞ս ամուսինս լինիլ , բաւական է այսքան զելս կեանքդ , ունեցածդ , չապլեցիր , մօրդ մահուան պատճառը եղար եւ այսօր ոչինչ ունիս ուտելու , ես այդ շատ լաւ գիտեմ . . . տալիս եմ քեզ իմ սիրտը , ունեցածս . . . ես հարուստ եմ . . . յարեց նա ձայնը հետզհետէ քաղցրացնելով—Նիկօ՛լ , բաւական է , 28 տարեկան ես , շուտով հասակաւոր կը լինիս , ապագայ չունիս , ամբողջ քաղաքի մէջ անպատիւ ես , ամուսինս եղիր , ես կը սրբեմ անպատուութիւնդ , մենք մի ուրիշ երկիր կ'երթանք : Նիկօ՛լ , խօսի՛ր , ընդունե՞մ ես . . . ես քեզ սիրում եմ , այո՛, պաշտում եմ :

Նա գրկեց երիտասարդին եւ սեղմեց իւր սրտի վրայ . աչքերը արտասուքով լեցունած էին , իսկ երիտասարդը մեղմանում էր . Մարթայի խօսքերը գործում էին իրենց ազդեցութիւնը :

—Տե՛ս, Նիկո՛ւլ, շարունակեց Մարթան նորան իւր գրկիցը չթողնելով—ես եթէ ուզենամ կարող եմ հեշտութեամբ չա՛տ ամուսիններ դնել—հարուստ եմ, բայց ես քեզ սիրում եմ երեք տարիէ ի վեր, ես չատ լաց եղա՛յ, չատ նեղութիւն եւ վիշտ կրեցի . . . տեսայ քո կեանքը, տեսայ քո կործանումը եւ քեզ համար լացի դառնութեամբ, որովհետեւ սիրում էի քեզ . . . զաւակիս սովորեցրի քո անունը . . .

—Օ՛հ, զաւակ . . . գոչեց Նիկոլը ցընդուելով—որդի՞ք :

—Այո, քո որդիդ է նա, քոն է, քո անունդ գիտէ, սիրում է քեզ :

Եւ նա մօտեցաւ սեղանին, զանգահարեց, աղախինը երեւեցաւ :

—Ո՛ւր է Միհրանը :

—Քնել է, ասաց աղախինը :

—Գնանք, դարձաւ Մարթան Նիկոլին եւ բռնեց նորա ձեռքը—գնանք համբուրիր մեր զաւակը, գեղեցիկ է եւ չա՛տ է նմանում քեզ :

Նա քաջեց նորան, մտքեց միւս սենեակը, բարձրացրեց անկողնի վարագոյրը եւ Նիկոլը զմայլամբ տեսաւ մի չքնաղ մանուկի, որը գլուխը աջ թեւի վրայ դրած, ձախը դուրս պարզած, քնել էր մի փոքրիկ հըրեշտակի նման :

Նիկոլը չոգեց նորա առջեւ եւ գլուխը ծածկեց նորա սրտի վրայ . մանուկը զարթնեց, ժպտեց եւ արտասուող Մարթային նայեց :

—Մայրի՛կ, գոչեց մանուկը վախեցած :

—Հայրիկդ է, ասաց Մարթան կերկերուն ձայնով :

—Հայրի՛կ . . . բացադանչեց փոքրիկը եւ իւր թեւերը փաթաթեց Նիկոլի վզին . . .

Մի փոքրիկ լուսեցաւ, երեք տարուայ ապառաժը գլորուեցաւ եւ Նիկոլի աչքից հոսեց դառն արտասուք . նա գրկեց մանուկին, համբուրեց եւ ապա ընկաւ Մարթայի գիրկը . . .

Մարթան մօտեցրեց նորան իւր շրթունքները եւ մրմնջեց .

—Իմա Նիկո՛ւլ, Վարդուհին է գրկիդ մէջը . . .

Երիտասարդը սարսուեց, ուզեց դուրս գալ գրկիցը, բայց Վարդուհին բռնեց նորան եւ գոչեց երեսն ի վեր .

—Ո՛վ էր նորա անպատիւ կեանքի պատճառը, եթէ ոչ դո՛ւ միայն . . .

—Վարդուհի՛, Վարդուհի . . . մրմնջում էր երիտասարդը . . .

—Այո, Վարդուհին եմ ես, վեց ամիս անառականօցը մնացի, մայրս մեռցրի, եղբորս մեռցրի . . . դուրս եկայ այնտեղից եւ երկու տարի կէս է, որ պտտում քո ետեւից . Նիկո՛ւլ, ձեռքիս մէջն ես, կամ պիտի ամուսնանամ եւ կամ . . .

Եւ նա ձեռքը շրջադրեց սրտի տակը տաքաւ եւ այնտեղից հանեց մի բէվովէր :

—Եւ կամ . . . շարունակեց Մարթան ահռելի ձայնով—նախ դու եւ ապա ես կը մեռնինք միասին . . .

—Ո՛հ, վար . . . գոչեց Նիկոլան սարսափած :

—Ասա՛, անուշա տուր, թշուառակա՛ն . ես Վարդուհին եմ . . . իմ կուսութեան արեան բիծերը հիւրանցի մէջ թողիր . . . որդիս երեք տարի առանց հօր թողիր . . . բարոյական կեանքս սպանեցիր . . . վճար այժմ, կամ մեռնիլ եւ կամ ամուսնանալ . . .

—Մեռնելուց չեմ վախենում, ասաց Նիկոլը—բայց . . .

—Բայց, միջահատեց Մարթան—ես նախ եւ առաջ մեր մանկան կը սպանեմ, գոչեց նա եւ բէվովէրը ձեռքին մօտեցաւ մանկան :

Նիկոլը գունաթափուեց, նա մի ոստիւնով թռաւ դէպի մանուկը, առաւ նորան իւր գրկի մէջ եւ գոչեց .

—Մի՛, Վարդուհի՛, մի սպանիր մեր որդուն . . .

Մարթան ձգեց բէվովէրը, ընկաւ նորա գրկում եւ,

—Իմ ամուսինս . . . գոչեց . . . ամէն բան ներում եմ քեզ, այժմ ների՛ր ինձ :

Նիկոլը պարզեց նորան իւր ձեռքը :

Երկու ժամից յետոյ, Վարդուհին եւ Նիկոլան պսակուած էին :

Մարթան մտաւ կողքի սենեակը, ջուր ուզեց աղախնից, լուսաց ամբողջ երեսը եւ սրբուելուց յետոյ Նիկոլը մօտ մտաւ :

Երիտասարդը սարսափեց . . . Վարդուհին իրիկուանը եւ առաւօտեանը չէր, այլ նիհար, տժգոյն այտերով եւ փոս ընկած

տխուր աչքերով մէկն էր, նման 40-50 տարեկան մի պառաւի:

—Նիկո՛ւ, ասաց Վարդուհին—ես այս եմ, երէկ ներկուած էի . . . դու ինձ խաբեցիր, ես էլ քեզ խաբեցի, մենք քուկդ ենք . . .

Եւ նա սարգեց նորան իւր ձեռքը:

Նիկոյը տխրեց. Վարդուհին տգեղացել էր, չա՛տ տգեղացել:

—Մի՛ տրտմիր, Նիկո՛ւ, աւելացրեց Վարդուհին—իմ տգեղութեան պատճառը դո՛ւ էիր . . . այժմ՝ պատժուեցա՛ր, բայց ես կը գեղեցկանամ. սակայն ինչ փոյթ, ես քեզ սիրում եմ—այդ կը լինի իմ գեղեցկութիւնը. ատո՞ւմ ես ինձ . . .

—Ձեմ կայող այլ եւս, ասաց Նիկոյը եւ մանուկի դէմքին նայեց:

—Մենք քուկդ ենք, ասաց նորէն Վարդուհին, մոտեցաւ նորան, ընկաւ նորա գրկում. Նիկոյի դէմքը զուարթացաւ, որովհետեւ Վարդուհին սիրտը բաբախում էր:

Վերջապէս իւր սիրտն էլ բաբախեց:

Եւ ապառաժը խորտակուած էր . . .

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՅ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԵՐ

(Շաբ. 5786 Բոհե և Վերլ).

Բ.

Շատ մարդիկ կը գանգատին միշտ թէ իրենց մազերը կը թափին, թէ եւ ամեն միջոցներով, իւղերով, քաղցրիկներով, սպեղանիներով, կուռած են այդ հիւանդութեան դէմ, ընդունայն դումարներ տալով «ամենապղու դարմանաց», որք քանի մը վաճառականաց քուսկները միայն պարարելու ծառայած են: Մազերն, որք արանց եւ մանաւանդ կանանց ամենէն հրապուրիչ զարդերէն մին են, արդարեւ ամենապարզ խնամոց միայն կը կարօտին, եւ այդ ամեն արուեստական միջոցները բոլորովին կը վնասեն մազային մորթին: Զայնս պահպա-

նելու լաւագոյն միջոցն է ամեն օր գլուխը լուալ մաքուր եւ պաղ ջրով, եւ շաբաթը մէկ անգամ ալ տաք ջրով՝ որուն վրայ պէտք է աւելցնել բարակ կտաւէ մ'անցած քիչ մը մոխիր: Լաւ է ապա մազերը շփել հաւկըթի մը դեղնուցով, եւ յետոյ մազերը լուալ մեծ խնամով: Այս դրութեամբ, բոլորովին առաջըը կ'առնուի թեփերու եւ մանր վէրքերու:

*
* *

Այժմ կուգանք խօսիլ նիւթի մը վրայ որ մեծապէս կը հետաքրքրէ մայրերն եւ որ վստահ ենք թէ շատ մը խանդադորով մարց երախտապարտութեան պիտի արժանացնէ զմեզ: — Շատ մը մանուկներ, զորս իրենց սպասուհիք կը պաշտօնէն օրրոց-կառքերու մէջ, յանկարծ կը հիւանդանան աղեաց բորբոսան ամեն ակտանիչերով եւ ըստ այնմ կը դարմանուին: Այդ փոքրիկ սիրուն էակներն կը կորսնցնեն իրենց այտերուն թարմագեղ կարմրութիւնն, եւ դեղին գոյն մը կ'առնուն. միշտ կը նեղուին որովայնի պընդութենէ, ակտրժակնին կը կորսնցունեն, յաճախ կը գալարին սաստիկ խիթով եւ վերջապէս կ'ընկճին ընդհանուր տկարութեան մը տակ, զոր լաւագոյն բժիշկը դժուարաւ կը բացատրէ, մինչ տղան նպաստաւոր պայմանաց մէջ կը գտնուի սննդեան եւ արտաքին պայմանաց տեսակէտով: Ծընողներն յայնժամ կ'ամբաստանեն բժիշկը թէ սխալած է իւր վճուոյն մէջ եւ թէ պատճառ եղած է հիւանդութեան մը որ դոյուլութիւնն չունէր կամ երազանցուկ էր, մինչդեռ հիւանդութիւնն յառաջ կուգայ եւ կը շարունակուի այդ անիծեալ օրրոց-կառքերէն, որք այնքան տընութեան գիշերներ կը կորզեն գորովագութ մօրն հանգստութենէն եւ տխրութեամբ կը համակեն հօրն լուրջ ճակատը: Արդարեւ յաճախ կը պատահի որ մանուկը, մանաւանդ ակաւայ հանած միջոցին, կը կրծէ իւր փոքրիկ կառքին ծայրերը, եւ որովհետեւ այդ տախտակները ներկուած են հանքային գոյներով յորս մեծ տեղ կը բռնէ կապարը, թունաւորում մը յառաջ կուգայ, որ այնքան անգամ կը կրկնուի որչափ մանուկը կրկնէ իւր սիրական խաղը: Մեր այս ըսածները կը պատ-

կանին նաեւ ձուլածոյ երկաթէ օրրոցներու, որք հանքային գոյներով ներկեալ են: Այդ փոքրիկ կառքերն եւ օրրոցները, բոլորովին անվնաս լինելու համար, պարտին սեւագոյն լինիլ: Նոյնպէս ծնողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք այն ամեն խաղալիկներուն վրայ զորոս մանկանց ձեռքը կը թողուն եւ որք յաճախ, իրենց երկներանգ գոյներով, անգիտակից պատճառները կը լինին մանկան հիւանդութեան: Ոսկորէ պարզ օղակ մը յաճախ լուազոյն խաղալիքն է թէ՛ մանուկն դրօսնեցնելու եւ թէ՛ ո եւ է վտանգի առաջն առնելու:

*
* * *

Մանկական խաղալիկներէն ի սեխ ցատկելու համար միջոցը բաւական մեծ է. սակայն մեք յաւակնութիւն չունինք կանոնաւոր դասախօսութիւն մ'ընելու առողջապահութեան վրայ, այլ մի քանի տողերով կը խօսինք առանձին առողջապահութեան մէկ քանի անհրաժեշտ կէտերու մասին:

Պէրնարաէն տը Սէն Բիէր, ոյր Պօլ Եւլիէթէն միայն կը ճանչենք մեք Հայերս եւ որ սակայն միեւնոյն ժամանակ լուրջ ուսումնասիրութիւններ ունի դրած բնութեան վրայ, ըսած է թէ սեխը գերազանցապէս ընկերային պտուղն է, որովհետեւ բնութիւնը, զատ զատ շերտերու բաժնելով զայն, ընտանեաց մէջ ուտուելու սահմանած է զայն ակներեւաբար: Արդ, ընտանիքն ընկերութեան խարխալը չէ՞:

Ինչ որ ալ լինի, սեխն սքանչելի պտուղ մ'է: Իւր բարկ ու խնկարոյր հոտը սակայն անհանդուրժելի է ինչ ինչ մասնաւոր հոտոտելեաց: Գալով իւր համին, գերազանցապէս թարմ, չաքարոտ եւ ախորժելի է: Անցողակի ըսենք թէ, ըստ նշանաւոր բժշկաց ոմանց, հոտը չբաւեր միայն զանազանելու հասուն եւ լաւ սեխ մը՝ խակ եւ անմարսելի սեխէ մը: Անուշահոտ խակութիւնը կրնայ շատ զարգացած լինիլ պտուղին մէջ, առանց պտուղն ստացած լինելու սպահանջուած հասունութիւնը:

Սեխն, ոյր հայրենի. երկիրն է Ասիա եւ հաւանաբար Արեւելեան Հնդկաստան, քաջածանօթ եւ յարգի էր հին քաղաքակիրթ ազգաց մէջ: Հռոմայեցիք կը գործածէին

զայն ընդդէմ ջրգողութեան, մորթի հիւանդութեանց եւ մանաւանդ որովայնի պընդութեան: Հէրմոլաուս այդ պտուղը կը յանձնարարէ իւր անդորրիչ դարման մը մանող կանանց, որք՝ կ'ըսէ՝ եւթակայ են տընդական գաղափարներու: Ղիտեցէք թէ այդ գաղափարը կը յայտնուի հազար երկու հարիւր տարի յառաջ քան զհայր Բէթլայն, մարդու ոյժերն սպառող այդ կատարելագործեալ գործիքն, ոյր վրայ կը թափին ամեն առողջաբանաց անէծքները:

Պէտք է ըսել թէ ո՛չ մէկ պտուղ կրնայ սեխին չափ ամօրել այն ծարաւն զոր ամառը կ'զգանք ճաշէն առաջ եւ որ շատ անձանց ախորժակը կը մարէ: Առողջաբանութիւնն ուրեմն ցոյց կուտայ սեխն իւր սննդական տարր մը որ կը կենդանացնէ մարսողական գործարաններն եւ կ'արգելու ըմպելեաց ծայրայեղ գործածութիւնն, որ այնքան վնասակար է ճաշուց սկիզբն: Աւասիկ միտալին լաւ կողմը:

Դժբաղդաբար, սեխն միշտ դիւրամարսելի չէ: «Արեւելէն եւ սեխերէն լաւագոյն բան չկայ» կ'ըսէր Մալէրպ: Բայց նա եւ, ոչինչ աւելի դժուար է դատել ըստ երեւոյթից. եւ երբեմն, ոչինչ աւելի գէշ: Սեխին եւ կնոջ համար կարելի է ըսել այն զոր Փօլիզագի կուզ առականսոն ըսած է. լեզուն համար: Անցեալ դարուն վերջերը սա ժողովրդական քառեակը կը յեղիջուէր ամեն մարդու բերնին մէջ ի Ֆրանսա.

Բարեկամներն ներկայ ժամու
Ցատկութիւնն ունին սեխերու.
Հարկ է յիշուն հատը փորձել
Անոնց մէկ լաւն գտնելէ առաջ:

Նոյն խակ, Եւրոպան պաշարող վերջին քոլերաներու ատեն պահ մը խնդիր չեղաւ արգելուլ դժբախտ սեխին վաճառումը:

Շիտակն ըսելու համար, սեխն ուրիշ շատ պտուղներէ վտանգաւոր է, որովհետեւ աւելի դժուարամարս է: Ասոր համար է որ պէտք է որպէս ճաշէն վերջը, ինչպէս կ'ընենք մեք՝ թուրքիացիքս: Ասոր համար է որ միայն մաղձային եւ արիւնային բնութեանց կը յարմարի: Ասոր համար է որ հարկ է աղէկ ծամել զայն եւ ակռաներով ճղմել իւր մաին թելերը: Երբ, որկորստաբար, կըլնենք ամբողջ կտորներ, անոնք ալ իրենց վրէժը կը լուծեն իւր օտար մարմին ազդելով

աղեաց վրայ, զորս չամաղանց կը գրգռեն :
Այս խօսքերը ճիշդ են մանաւանդ աշնան
սեխերու համար, որոց շաքարը քիչ է եւ
որք միայն զօրեղ ստամոքսներու կը պատ-
շաճին : Այդ սեխերով է գլխաւորաբար որ
մարդ անմարսողութենէ կը մեռնի, ինչպէս
Պօղոս Բ. Պապը :

Ամիսիկերով մեր խօսքը, կ'ըսենք թէ
պէտք է ուտել սեխը կամաց կամաց, լաւ
ծամելով, եւ ինչպէս կ'ընեն Եւրոպացիք՝ հե-
տը կամ յետոյ խմելով քանի մը ուժալ քօն-
եաք կամ գինի : Սեխը մէզի առատութիւն
յառաջ կը բերէ, այլ մանաւանդ կակղիչ է :
Տկար ստամոքսներն, վատոյժ եւ ապաքինող
անձինք պարտին զգուշութեամբ վարուիլ
անոր հետ, եթէ կ'ուզեն զերծ մնալ խի-
թէ, անմարսողութենէ, թանջքէ, եւ այն
գրգռումէն զոր նա յառաջ կը բերէ մար-
սողական խողովակին երեսաց վրայ :

Լ. Բ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Տ Ա Ղ

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍՍՅԵԱԼ

Երազ ու սուտ է եղբարք,
Աշխարհիս բաներն ի լըման,
Ո՛ւր են թագաւորք Էիլխանք,
Պարոնայք ու սուլթան ու խան :

Շինեցին բերդ ու քաղաք,
Դարպասներու շատ դատեցան,
Յետոյ դեմ անտէր թողին,
Եւ մտան ի հող Էի զնդան :

Նաղաշ, մի խաբեր մեղաւք,
Մի դատիր անասնոյ նման,
Մի գիրկ աշխարհիս ածիր,
Մի կարծիր թէ քեզ տ'իման :

Շուտով քեզ խնդիր կուգան,
Ու խոցեն զհողիդ մահուան,
Հոգիդ բաժանի ի քէն,
Եւ մնայ մարմինդ ի զնդան :

Աշխարհս դեմ աւֆայ չուենի (*)

(*) Նոյնութեամբ օրինակուած է բոլոր երգն,
նոյնպէս այս տողս որ անհասկանալի է :

Ոչ արեր է մարդոյ բարի,
Աւերքք մի խնդալ կուտայ,
Բայց յետոյ է դառն ու լեղի :

Աշխարհիս մի հաւատար,
Ջօրն ի բուն գեմ սուտ կու խօսի,
Ձինչ որ խոստանայ բնաւ,
Ձի պահեր զիւր խաւսքն ի տեղի :

Շատոց խոստանայ հանգիստ,
Ու պահէ զաւրներ երմնի,
Շատոց մեծութիւն ասաց,
Ու պահեց աղքատ Էանօթի :

Խաբէ թէ ուրախ պահեմ,
Եւ առնեմ զաւրերդ ի բարի,
Ի մէջն ի ծովուն տանի,
Եւ պահէ ի տարտարոսի :

Աւուրք մի վերայ անցնի,
Լուկ մահուն աւրն հասանի,
Արեւուն դատարկ հանէ,
Խաւսէ ողորմ ու լալի :

Աւաղ զայն աղվոր մանկալքն,
Որ դարձան ի հող Էի փոշի,
Իւրեանց ժամանակն անցաւ,
Ձէտ զերազ մութն գիշերի :

Եւ երբ զայդ գտեր գերի,
Որ քօ սէրդ ի սուգ տի փոխի,
Ձաշխարհս դու մի սիրեր,
Առաւել քան զկարն աւելի :

Մալի հասրաթ մի լինիր,
Մեծութիւնն քեզ չի պիտի,
Ունիս կերակուր հանդերձ,
Աւելին քեզ ցաւք կու լինի :

Է՛ ողորմելի Նաղաշ,
Դու ջանա եւ գործէ բարի,
Ձքո խրատն դու լսէ,
Որ այլոց ի գործ անցանի :

Գիտիր թէ լողորդ էիր,
Նա մեղաց գետն կու տանի,
Ի հող աշխարհիս դատիս,
Շահ չուենիս զեն աւելի :

Հաւաքեց Հ. Յ. Էնիսեան

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ԸՆՏԱՆՆԱՅ ԴԻՄԱԳԻՄՆ

Ի՞նչպէս կը լինի որ ընտանեկան դիմագիծն (ֆէշիճօֆ) կը պահպանուի սերունդէ ի սերունդ եւ միշտ երեւան կ'ենէ այնպիսի ճշգրիտ նմանութեամբ որ զանազան ընտանեաց վերաբերող բազմաթիւ անհատից դիմանկարներն՝ իրարու խառնուած առեն իսկ՝ դիւրաւ կ'որոշուին մի եւ նոյն ընտանիքի վերաբերող անդամաց դիմանկարներէն :

Այս խնդիրը կատարելապէս բացատրելու ելնել՝ կենաց անլուծանելի գաղտնիքը բացատրել ուզել է, ինչպէս նաեւ այդ մասին տարակուսիլ՝ արեգական վրայ տարակուսիլ ըսել է :

Ծնողաց եւ անոնց զաւակաց մէջ եղած նմանութիւնն որքան ալ զարմանալի եւ պարզ իրողութիւն մը լինի, բարոյական ինչպէս նա եւ ֆիզիքական նմանութեանց առնչութիւնները տակաւին կատարելապէս ուսումնասիրուած եւ որոշ եզրակացութեան մը յանգած չեն :

Աւատիկ սակայն այս մասին կատարուած գիտակցական եւ դրական գննութեանց արդիւնքն .

Ա.— Երբ հայրը ծայրայեղ ապուշ է եւ մայրն ուշիմ, զաւակները վերջին աստիճան ուշիմ կը լինին :

Բ.— Եթէ հայրն ի բնէ բարի է, զաւակներն ընդհանրապէս գովելի յատկութիւններ կ'ունենան, կամ գոնէ՝ զրեթէ միշտ՝ ազնուաբարոյ կը լինին :

Գ.— Մանչ զաւակներն իրենց բարոյական նկարագիրն իրենց հօրմէ կ'առնուն, երբ սա բարի է, եւ մտային նկարագիրը մօրմէ . իսկ աղքիկ զաւակներ երկուքն ալ մօրմէ :

Դ.— Եթէ զաւակաց եւ ծնողաց մէջ եղած նմանութիւնը բացորոշ տեսնել ուզուի, պէտք է գննել տղան ծնանելէն անմիջապէս մէկ երկու ժամ ետքը, այն առեն միայն դիւրաւ կ'որոշուի թէ երախայն մասնաւորապէս որո՞ւ նմանութիւնը կը կրէ :

Ս.յդ առաջին նմանութիւնն, այնքան ըստոյգ, ընդհանրապէս քիչ մը ետքը կ'անհե-

տանայ եւ շատ անգամ տարիներէ եւ երբեմն մինչեւ իսկ մահուընէ յետոյ միայն կրնայ վերստին երեւան գալ :

Ե.— Եթէ տղայը՝ քանի զարգանան՝ սկըսին իրենց ծնողաց նմանիլ, մի/եւ նոյն յառաջատուութիւնը պէտք է վնասուի նա եւ անոնց բարոյական նմանութեան մէջ : — Թէ եւ զաւակներն որքան ալ իրենց ծնողաց ֆիզիքական նմանութիւնը կրեն, անոնց բարոյական նմանութեան մէջ խիստ շատ անգամ տարբերութիւններ կը տեսնուին, սակայն դիտելի է որ այդ տարբերութիւնն կամ աննմանութիւնն աւելի արտաքին պարագայից արդիւնքն է, եւ թէ այդ տարբերութիւնն ֆիզիքական նմանութեան վաղ կամ անագան չյաղթուելու չափի զօրաւոր պէտք էր լիներ :

Զ.— Ոսկերաց եւ մկանանց ամբուսթիւնն ու տեսակն — ոչ ձեւն — հօրմէ կը ժառանգուին, իսկ ջիւերու տեսակն ու դէմքի ձեւն մօրմէ, եթէ սորա երեւակայութիւնն ու ամուսնական սէրը կենսական արմատներ արձակած են իւր ամուսնոյն վարմանցը մէջ :

Է.— Երբ պատահի երբեմն որ զաւակաց դէմքի ձեւերէն մի քանին իրենց հօր եւ մի քանին իրենց մօր նմանութիւնները կ'ունենան . այս պարագայի մէջ որոշիչ ազդեցութիւնն հօր կամ մօր սիրոյն առաւելակշռութեան եւ կամ միոյն կամ միւսին քով ունեցած առաւել կամ նուազ առնչութեանց կը վերագրուի :

Ը.— Մայրական ամեն ազդեղութեանց եւ անոնց երեւոյթներու փոխանցումը մօր երեւակայութեան արդիւնքն է : Զաւակներն աւելի իրենց հօր նմանութիւնը կը բերեն, երբ մայրը զօրաւոր երեւակայութեան մը հետ ունի նա եւ սէր եւ համակրութիւն առ իւր ամուսին . այս է ահա — ինչպէս ի վեր անդր յիշեցինք — այն զօրաւոր եւ կենսական նիւթն, որ կը վերաբերի հօր, մինչդեռ սրտի յատկութիւնները, ջըղային յուզումներն եւ դէմքի ձեւերն ու ոգեւորութիւններն կը վերաբերին մօր :

Արդ երբ — որոշիչ պահու մը մէջ — մայրը իւր ամուսնոյն դէմքը տեսնելէ անմիջապէս յետոյ տեսնէ նա եւ դիւրն, այս պարագայն առաւել կամ նուազ կ'որոշէ զաւակաց նմանութիւնն իրենց հօր կամ մօր :

Թ.— Կան որոց գէմքի ինչ ինչ ձեւերն երկար ատեն նոյնը կը մնան եւ կան որ շուտով կ'անհետանան։ Շատ գեղեցիկ կամ շատ տգեղ հայրերու նմանութիւնն իրենց զաւակաց վրայ երկար ատեն չը տեսնուիր։ Նոյնպէս ընտանեաց մէջ քիչ տեւողութիւն կ'ունենան այն գէմքեր, որք աննշան են։ Խոշոր կամ փոքր գէմքերու ձեւերն խիստ դիւրաւ կը փոխանցին և կը մշտնջենաւորին։

Ժ.— Փոքրիկ քիթ ունեցող ծնողաց զաւակները՝ գրեթէ առանց բացառութեան մեծ քիթ կ'ունենան։ Երբ ծնողաց միոյն կամ միւսին քիթը չափազանց խոշոր է, անոնց զաւակաց գոնէ մին խոշոր քիթ պիտի ունենայ, եւ այդ քիթ նոյն ընտանեաց մէջ պիտի մշտնջենաւորի, մանաւանդ երբ մօրմէ ժառանգուած լինի։ Կրնայ պատահիլ սաւկայն որ նոյն ընտանեաց մէջ ժամանակ մը խոշոր քիթ չ'տեսնուի, բայց վաղ կամ անաղան վերստին երեւան պիտի ելնէ, եւ գլխաւորաբար իւր անհետացումէն մէկ երկու օր ետքը կատարելապէս պիտի յիշեցնէ իւր նախատիպը։

ԺԱ.— Եթէ մայրը վատվուեն աչեր ունի, կրնաք ասպնոյ վրէիլ թէ անոր գրեթէ ամեն զաւակներն ալ նոյնը պիտի ունենան։ ասոր համար է որ զմադկտական զգացումն գլխաւորաբար կը յարի աչաց քան քիթի եւ դիմաց ուրիշ մասերուն։ Եթէ կանայք սովորէին իրենց դիմաց ուրիշ մասերուն դիմագրութիւնը սերտել, գուցէ այս վերջիններն աւելի դիւրաւ փոխանցէին։

ԺԲ.— Կարճ եւ կոր ճակատներն ընդհանրապէս կը փոխանցին, բայց երկար ատեն չեն տեսեր։

ԺԳ.— Ճշմարիտ եւ անմեկնելի է սա եւս թէ բաղմածին անձանց զօրաւոր դիմագծերն կ'անհետանան առանց նմանօրինակ սերունդեան փոխանցելու, մինչդեռ ուրիշ նուազ հոջակեալներն երբէք չեն անհետանար։

ԺԴ.— Ոչ նուազ ճշմարիտ է թէ հայրական կամ կամ մայրական զմադկիծն երբեմն բուրովին կ'անհետանայ անոնց զաւակաց վրայ, սոյն վերջնոց զաւակաց վրայ վերստին երեւան գալու համար։

ԺԵ.— Ձանազան խառնուածքներու մէջէն ամենէն դիւրաւ փոխանցելին է արիւնայինն։ Թեթեւամտութիւնն եւս համընթաց է ասոր։ Երբ սա մի անգամ մուտ

գտնէ ընտանիքի մը մէջ, անհամեմատ ճիւղեր թափել պէտք է զայն արմատախիլ ընելու համար։

ԺԶ.— Հօր մեղամաղձոտ բնութիւնը դիւրաւ կը փոխանցի իւր զաւակին, երբ մայրը երկիւղ կրէ թէ իւր զաւակն ալ նոյնը պիտի ունենայ։ ասի տեղի կ'ունենայ մանաւանդ երբ մայրը — որոշիչ պահու մը մէջ — յանկարծ այդպիսի երկիւղ մը զգայ։ Բայց մեղամաղձոտ բնութիւնն նուազ դիւրութեամբ կը փոխանցի եթէ մօր այդ տեսակ երկուղն ի վաղուց հետէ շարունակուած եւ ամօքուած էր։ Նոյնպէս այն մայրեր, որք միշտ կամ գրեթէ ամեն ատեն մտառանջութեան մէջ գտնուին թէ տճեւ եւ տղեղ զաւակ մը պիտի ծնանին, ըստ որում այլանդակ եւ սոսկալի առարկայ մը տեսած են, գրեթէ շատ անգամ ձեւաւոր եւ դեղեցիկ զաւակներ կը բերեն։ Ճիշդ անոր համար՝ որ անոնց երկիւղն երեւակայական էր և ոչ յանկարծահաս որ սոսկում և խորշանք ազդէր։

ԺԷ.— Երբ հօր կամ մօր կողմէ բարկացոտ բնութիւն մը միանգամ մուտ գտնէ սերունդի մը մէջ, ամբողջ դարեր պէտք են զայն ամբողջապէս բնաջինջ ընելու համար նոյն ընտանեաց մէջէն։

ԺԸ.— Մաղսային խառնուածքն ամենէն զփուար կը փոխանցի, եթէ նոյն խիւ հայրն ու մայրը միանգամայն ունենան զայն, վասն զի կենաց մէջ այնպիսի վայրկեաններ կան, յորում մաղսային մարդն՝ որքան ալ անխռով լինի եւ պաղարիւն՝ կ'ստիպուի իւր Փիղիբական և բարոյական բոլոր գորութիւններն ի կիր արկանել, եւ այդ շարժումն տեւողական ազդեցութիւններ կ'ունենայ։

ԺԹ.— Ձկայ բան մը, որոյ փոխանցումն այնքան ապահով լինի, որքան գործունէութիւնն ու աշխատութիւնը, մանաւանդ եթէ ասոնք կախում ունենան ծնողաց վիճակէն եւ աշխատելու հարկէն։ Կործուեայ եւ աշխատասէր զոյգ մ'ամբանոց սերունդներն անհետանալու և առաջին կեսնքը վերադառնալու համար շատ տարիներ պէտք է անցնին, վասն զի գործունեայ մայրեր բաղմածին ալ կը լինին։

Ա.Լ.Ե.ՔԱՄԵՐՏՐ ՏԱՎԻՏ

Թարգմ. Յ. Թ.

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԵՐ

21-27 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

—o—

Ֆրանսայի երեսփոխանական ընդհանուր ընտրութիւնը կատարուեցան շաբաթու 15-ը եւ այն տեսակ արդիւնք մը յառաջ բերին որ բոլորովին աննպաստ է Հանրապետական արդի կուսակցութեան :

Միապետական եւ կղերական միացեալ կուսակցութիւնը մասնական բայց յոյժ ծանրակշիւ յայտնութիւն մը տարին Հանրապետականաց վրայ, որք բաժանեալ կը մնան միշտ, եւ Պատեհական կոչուած Հանրապետականը որք վերջին տարիներս կը կառավարէին Ֆրանսան՝ ծանր պարտութիւն մը կրեցին :

Կը յիշուի թէ ընտրական գրութիւնը փոխուած էր վերջերս : Փոխանակ ամեն գաւառակ կամ ամեն թաղային շրջանակ իւր մէկ-երկու երեսփոխան ընտրելու, որոշուած էր որ ամեն ընտրող քուէ տայ ամբողջ Նահանգէ մ'ընտրելի երեսփոխաններուն : Այսպէս զանազան կուսակցութեանց մասնախումբք պարտասեցին ընդհանրաց Կերն : Այս գրութիւն Աջակողմեանց օգտակար եղաւ, զի աջակողմեանք, որ ուրիշ աւիթներու մէջ չեն միանար, հասարակաց թշնամոյն այսինքն Հանրապետութեան դէմ միացան, եւ Պոնաբարդեանք՝ Պուրպոնեանք, Օրլէանեանք եւ պարզ Պահպանողականք միաբանութեամբ ամեն նահանգի մէջ միակ ցանկ մը չինեցին, եւ իրենց բոլոր հետեւողք միակ ցանկ մը քուէարկեցին : Իսկ Հանրապետականաց երկու մեծ մասերը չկրցան միանալ : Պատեհականաց վարիչ կուսակցութիւնը, (Կամպէդէպի, Պ. Ժ. Ֆէրիի, Պ. Պրիստի, Պ. Ֆրէսինէի կուսակցութիւնն) ունեցաւ առանձին ցանկ կամ ցանկեր : (Կիւ այս կուսակցութեան մէջ իսկ կան ստորաբաժանմունք,) եւ Մայրաքաղաք, Պ. Բլէմանտի եւ Պ. Ռոշֆորի կուսակցութիւնն) ունեցան տարբեր ցանկեր : Արդիւնքն այն է որ Աջակողմեանք, իբր 600 անդամէ բաղկացեալ Ժողովոյ մը մէջ,

իրենց արդէն ունեցած անդամոց վրայ չահած են 44 անդամներ եւս, որով Հանրապետական դատը նոր երեսփոխանութեան մէջ պիտի կորուսանէ (44×2) 88 ձայն : Մինչեւ ցարդ բոլոր Զախակողմէն ընտրուած երեսփոխանք թուով նուազ են ընտրուած Աջակողմեաններէն : Բայց տարակոյս չկայ թէ համեմատականի մնացած 199 աթոռոց ամենամեծ մասը պիտի չահին Հանրապետականք, թէեւ Պահպանողականք ալ նոր աթոռներ պիտի չահին համեմատականի մնացածներէն : Համեմատականի մընացած ընտրութիւնք 15 օրէն պիտի կատարին : Մինչեւ այն ատեն զանազան հանրապետական կուսակցութեանց կը մնայ միաբանիլ իրենց մէջ, եւ իւրաքանչիւր Նահանգի մէջ միակ ցանկի մը վրայ քուէարկել : Յայտնի չէ սակայն թէ այսպիսի միաբանութիւն մը պիտի դոյնանայ Հանրապետականաց մէջ :

Աւասիկ երեսփոխանական ընտրութեանց ընդհանուր արդիւնքն, ի բաց առեալ Փարիզի ընտրութիւններն որք ցարդ ծանօթ չեն :

Աջակողմեան ընտրելիք, ընտրեալ 180
Զախակողմեան ընտրելիք, ընտրեալ 155
Համեմատականք 221

—Մարսիլայէ կը հեռագրուի թէ հընտարտը բոլորովին անհետացած լինելով՝ առողջապահական վարչութիւնը մաքուր անցադիր կուտայ :

—Վիէնայէն ստեղծուած հեռագիրք կը հերքեն այն զրոյցներ թէ աւստրիական բանակը շարժուն վիճակի մէջ կը գրուի :

—Ռուսիոյ կայսրն որ այս պահուս Բոբէնհակ կը գտնուի, չարթուս մէջ ընդուններ է պուլիարական պատգամաւորութիւնն որ գնացած էր իւր աջակցութիւնն հայցելու : Զարն ի պատասխանի, պարտաւեր է Արեւելեան Ռումելիի դէպքերն եւ յայտարարեր է թէ համայն եւրոպա պիտի լուծէ խնդիրը :

—Պ. Ալատստոնի կոկորդի ցաւը բուժուելու վրայ է : Կը կարծուի թէ ազատական նախորդ նախարարատետը տասնեւհինգ օրէն յետոյ պիտի կրնայ շարք մը ընտրական ատենախօսութիւններ ընել ի Միտլթան :

—Հունգարիոյ խորհրդարանին մէջ, նախարարապետ Պ. Թիւձա, Արեւելեան գոր-

ծոց մասին հարցապնդման մը պատասխանելով, յայտարարեց թէ ո եւ է կարգադրութիւն եղած չէ ի Քրէմլէր. թէ տէրութիւնք կը ջանան պահել Պէրլինի դաշնադիրն, եւ թէ անոնցմէ ոչ մին կարգելու զԹուրքիա իւր իրաւունքներն ի գործ դնելէ, եթէ կամի :

Պ. Թիճա յայտարարեց նաեւ թէ բնաւ խնդիր չկայ գրաւելու զՊոսնիա եւ Հէսթէք, այլ թէ՛ եթէ խաղաղ լուծման մը յանգելու մասին տէրութեանց ջանքերն ի դերեւելն են եւ եթէ Աւստրո-Հունգարիոյ կենսական շահերն վտանգի ենթարկուին այդ պատճառաւ, կառավարութիւնն իրեն կը վերապահէ պէտք եղած որոշումն ընել :

Ն Ե Ր Ք Ի Ն

Պուլկարական աստատմութիւնը նոր երեւոյթ մը չ'ստացաւ շարժում մէջ : Մայրաքաղաքիս օտար դեսպանք քանիցս ի ժողով գումարեցան պատրաստելու համար այն համիմատ ծանուցագիր զոր պիտի տան ի պատասխանի Բ. Դրան բողոքագրոյն, բայց չկրնալով համաձայնութեան մը գալ, դադրեցուցին իրենց նիստեր եւ որոշեցին որ իւրաքանչիւր դեսպան խնդիրն իւր տէրութեան հաղորդելով, ըստ այնմ հրահանգ խնդրէ :

Դեսպանք համաձայնած են միայն սա երկու կէտերու վրայ. նախ պէտք է պարտաւել Աղեքսանդր իշխանին ընթացքն. եւ երկրորդ՝ պէտք է յանձնարարել Բ. Դրան որպէս զի բարեհաճի առ այժմ ո՛ր եւ է զինուորական միջոց ի գործ չի դնել : Միւս կողմէ հաստատութիւն կը գտնէ այն լուր թէ Արեւ, Բուլճին եւ Պուլկարիա անջանալէ պիտի միացուին :

—Շարժում մէջ երկու պուլկար պատգամաւորք եկան ի Կ. Պոլիս. Տոքթ. Չոմաքոֆ եւ Պ. Հաճի Բէտրոֆ, որք եկած են ի դիմաց Աղեքսանդր իշխանին : Տոքթ. Չոմաքոֆ դեր-նախագահն է Փիլիպէի առժամեայ կառավարութեան : Պատգամաւորք առաջին զիշերն անցուցին Ոստիկանութեան նախարարի օպարաներն մէջ եւ յաջորդ օրը ներկայացան Բարձր. Մեծ-Եպարքոսին :

—Տեղական Թուրք լրագիրք հետեւեալ տեղեկութիւնները կ'ստանան իրենց Ազրիանուպոլսոյ մասնաւոր թղթակցէն :

Աղեքսանդր իշխանին Պուլկարիա երթալու լուրն անստոյգ է. իշխանը միշտ Փիլիպէ կը գտնուի եւ կարմիր համազգեստ հագած փողոցները կը շրջի. Պուլկարք երբ իրենց իշխանը տեսնեն՝ երեսանկեալ գետին իյնալով երեսնին եւ աչքերնին իշխանին ոտից հողերուն վրայ կը քսեն : Աղեքսանդր անուն հեծեալզօրաց գունդ մը, Հիւսարի զօրագունդ մը եւ տասն երկու թնդանօթ եւ խել մը հեծեալզօրք Պուլկարիայէն յԱրեւել. Բուլճին հասած են : Պուլկարիոյ մէջ երկու ասարդուհիք եւ տղայք բանակ մը կազմած են : Պուլկարիոյ եւ Արեւելեան Բուլճինի մէջ գտնուած պուլկար զինուորք իրենց կուրծքին վրայ « աղադո-թիւն կա՛մա՛հ » նշանաբանը կը կրեն : Ընդհանրապէս Պուլկարք կը կարծեն թէ օսմանեան զօրքերն յԱրեւելեան Բուլճին պիտի մտնեն եւ այս՝ մեծ ահու դուլ կը պատճառէ նոցա : Փիլիպէէն մինչեւ Հարմանլի կայարանը խիստ հսկողութեան ներքեւ կը գտնուի : Աղեքսանդր իշխանին հետ Վիէնայի զօրահանդէսին ներկայ գտնուող գերմանացի Հիւսարաց հարիւրապետ Պ. Քրօնի հրամանատարութեան ներքեւ՝ որ առժամապէս գնդապետ անուանած է՝ 10,000 կամաւոր եւ 7,000 կանոնաւոր զօրք կը գտնուին : Տեղւոյն աւստրիական հիւպատոսին տուած տեղեկութեանց նայելով, Գարատաղցի հռչակաւոր աւազակապետ Նիգօլա Բալվոլիչ Շքօտրայի, Բրիգրէնտի եւ Սելանիկի կողմերէն 2,000ի չափ կամաւոր զօրք ժողոված է, որք քիչ օրէն Փիլիպէ պիտի ժամանեն : Պուլկարք այս Միութեան գործին յաջողման համար պատրաստ են իրենց արիւնը թափել եւ այս առթիւ մեծ տէրութեանց կողմէ եղած խրատներն ալ չպիտի ընդունուին : Պուլկարիա գտնուող ռուս սպայք իրենց պաշտօնին գըլլելով կը գտնուին եւ անստոյգ են լրագրաց այն հրատարակութիւնք թէ ռուս ըսպայք հրաժարած են :

—Կըսուի թէ Կապիթէլ փաշա ազատ թողուած է եւ մայրաքաղաքս կուգայ :

—Արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի նախորդ օգնական Չայեան

վսեմ. Իրիաս էֆենտի վերահաստատուեցաւ իւր պաշտօնին մէջ :

—Արտաքին գործոց նորընտիր նախարար Վսեմ. Սայիտ փաշա մայրաքաղաքս եկաւ Պէրլինէն եւ այսօր իւր պաշտօնի գլուխը կանցնի :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

—o—

Ահաւասիկ Բեդրսպուրկի Մերսիսի Լր. քէր պաշտօնական թերթին մէջ հրատարակեալ կայսերական Հրովարտակն ի հաստատութիւն վեհ. Մակար Սրբազանի կաթողիկոսութեան .

«Նորհիւ Աստուծոյ, Մեր, Ալեքսանդր Գ., կայսր ամենայն Ռուսաց, եւ եւ յայտ առնեմք առ ամենայն ժողովուրդն Հայոց թէ՛ լսելով իւր հոգեւոր ներկայացուցչաց հանդիսաւորապէս յայտնած փափաքն ի 21 ապրիլի 1885 ամի ի Ս. Էջմիածին, կը հաստատեմք Մակար Արքեպիսկոպոսն, առաջնորդ Պետարապիոյ Հայոց թեմին եւ անդամ Ս. Սինողին, Պատրիարք Էջմիածնի եւ կաթողիկոս ամենայն Հայոց : Կ'աղաչեմք զԱստուած որ օրհնէ Մայրադոյն Պատրիարքն իւր մեծ պաշտօնին մէջ ի պաաս Տեառն, ի բարօրութիւն եւ ի փրկութիւն Մեր սիրեցեալ հայկազն ժողովրդեան : Տըւեալ ի կայսերական բնակարանն, ի քաղաքն Ս. Պետրոսի, յամի Տեառն 1885 ի 18 յուլիսի, հինգերորդ տարի Մեր թագաւորութեան, — Ա.Լ.Բ.ՍԱՆԴՐ :

Աւասիկ ուրիշ երկու կայսր. հրովարտանքեր եւս որք Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետին տրուած են վեհ. ջարին կողմէ :

ՎԵՂԱՐԻ ԽԱՁԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Սըբաշնայն Պապրեարք-Կաթողիկոս Էջմիածնի

Մ Ա Կ Ա Ր Ա Յ

«Բազմաթամանակեայ հոգեւոր պաշտօնավարութիւն Ձեր զրաւեաց յանձն Ձերոյին վեհափառութեան զհամարումն Ազգին Հայոց, որ ընտրեացն զՁեզ այժմ վասն ունելոյ զՊատրիարքական Աթոռ

«Սրբոյն Գրիգորի, Լուսաւորչին Հայաստանեայց :

«Տեսանելով ի Հովուապետական գործ «Ծուռնութեան Ձերում զգրաւական յոյժ «մերձաւոր սրտի իմոյ բարեկենդանութեան «Եկեղեցւոյն Հայոց եւ Հոգեւոր յառաջադիմութեան որդւոց նորին, Ամենողորմա «Ժաբար շնորհեմ Ձեզ վասն կրելոյ ի վերայ «վեղարի գլխաւ Արքաճանդեայ՝ զՍրբազան նը «չանակն հաւատոյ, զոգեւորոյն որպէս «զհովիւս այնպէս եւ զհօտս նոցին :

«Յանձն առնելով զիս աղօթից Ձերոց, «մնամ տու Ձեզ բարեմիտ :

«Յիսկականին Նորին կայսերական Մեծութեան ձեռամբ ստորագրեալ է »

Ա.Լ.Բ.ՍԱՆԴՐ

Ի Պետերգ. ֆ
Ի 18 յուլիսի 1885 ամի

ՇԲԱՆՇԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Մայրադոյն Պատրիարքին Էջմիածնի եւ կաթողիկոսին Ամենայն Հայոց ՄԱԿԱՐԱՅ.

«Ի նշանակ մտադրութեան Մերոյ առ «Լուսաւորչական Հայոց Եկեղեցին եւ ի «յայտարարութիւն Մերոյ սուանձին անձնականապէս առ Ձեզ բարեհաճութեան, «ԱմենողորմաԺաբար համաթուեցաք Մեր «զՁեզ կայսերական չքանչանի Մերոյ Սրբոյ «եւ բարեպաշտ Մեծ Իշխան Ալեքսանդրի «Նէփսկոյ, զորոյ զնշանս ընդ սմին առաքեմք, մնալով առ Ձեզ կայսերական ողորմածութեամբ Մերով բարեմիտ :

«Յիսկականին Նորին կայսերական Մեծութեան ձեռամբ ստորագրեալ է » :

Ա.Լ.Բ.ՍԱՆԴՐ

Ի Պետերգ. ֆ
Ի 18 Յուլիսի 1885 ամի.

—Կը լսենք թէ Գեր. Վահրամ եպիսկոպոս Մանկունի Կ. Պոլիս պիտի գայ ի մօտոյ :

—Ս. Երուսաղէմայ Պարտուց Բարձման Խորհրդ. Յանձնաժողովն այս օրերս չընթերական ո' ուղղելով մայրաքաղաքիս բոլոր թաղական Խորհրդոց, խնդրած է որ փութան վերջնապէս կարգադրել նախորդ Յանձնաժողովոյ կողմէ ընդհանուր հանգա-

նակութեան համար յառաջագոյն շրջաբերութեան հանուած երեք արծաթ դահեկաննոց տոմսակաց հաշիւն, յղելով իրենց սպառած տոմսակաց բուններն եւ մնացորդ տոմսակներն հանդերձ այդ հաշուէն բովերնին գանձուած պատրաստի գումարով:

—Տիգրիսէն մեզ գրուած նամակներէ կը տեղեկանանք թէ Պ. Գրիգոր Արծրունի սեպտ. 12ին հրաման ստացեր է վերստին հրատարակել Մշակ Օրաթերթն:

Յայտնի է թէ Պ. Արծրունի իւր անձնական գործոց պատճառաւ իբր մէկ տարիէ ի վեր դադրեցուցած լինելով իւր թերթի հրատարակութիւնը, Ռուսիոյ տպագրական օրինաց համաձայն, արտօնութիւնը կորուսած էր. Պ. Արծրունի ի Տիգրիս վերադարձին՝ խնդրագիր մատուցանելով Բեդրսպուրի կառավարութեան եւ հարկ եղած զիմուսն ընելով, յաջողած է հրատարակութեան հրաման ստանալ:

Մշիւ պիտի սկսի հրատարակուիլ յառաջիկայ յունուարի սկիզբն ինչ ինչ նախապատրաստութեանց պատճառաւ:

—Շաբթուս մէջ նիստ ըրաւ Կեդրոնական վարժարանի բացման խնդրով զբաղող Յանձնաժողովն, յորում ի դիմաց Գալաքական ժողովոյ ներկայ էր Վսեմ. Գ. Նորատուկեան էֆէնտի, ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ՝ Տօթ. Շիշմանեան եւ Կ. Իւթիւճեան էֆէնտիք, ի դիմաց Ղալաթիոյ Կալուածոց Հոգաբարձութեան՝ Հաճեան Անտոն էֆ., ի դիմաց Տնտեսական Խորհրդոյ՝ Մ. Ինճէեան եւ Մ. Զօպանեան էֆէնտիք եւ ի դիմաց Կեդր. Վարժարանի Հոգաբարձութեան՝ Յ. Նորատուկեան էֆէնտի:

Վարժարանն հինգ տարի մատակարարելու պաշտօն ունեցող խնամակալութեան կողմութեան եղանակն որոշուեցաւ: Վարժարանի ուսմանց յայտագիրը գծուեցաւ եւ առաջիկայ նըստին թողուեցաւ տնտեսական մասին կարգադրութիւնն: Վարժարանի բացումն ըստ կարի պիտի փութացուի:

—Մեզ գրում են Բօրժօմից:

Ամսոյ 29-ին Վրաստանի եւ Իմերէթի թեմի Առաջնորդ Ս. Արխատակէս Եպիսկոպոսը ժամանելով Բօրժօմ, միւս օրը ներկայացաւ Կովկասի նախկին Փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկողայեւիչին: Նորին

Կայսերական Բարձրութիւնը սիրալիր ընդունելութիւն ցոյց տալով Նորին Առաջնութեան, կէս ժամ խօսակցեցաւ նորահետ: Այնուհետեւ Մեծ Իշխանը առաջնորդեց Ս. Եպիսկոպոսին Մեծ Իշխանուհու ապարանքները, որին օրհնելուց յետոյ Սըրբազանը մեկնեցաւ պալատից:

Նոյն օրը Նորին Առաջնութիւնը երեկոյեան գնացքով վերադարձաւ առաջնորդանիստ քաղաքը: (Առաջադէպ)

—Յ. Մոստիշեան էֆէնտի, որ ծանօթ է մեր ազգայնոց կրթական ընկերութեանց մէջ երբեմն ցոյց տուած գովելի գործունէութեամբն եւ որ Ռուսիոյ Քոլէճի ուսումնաւարտներէն է, Օքսֆորտի Համալսարանին մէջ չորս տարի աշխատելով իրաւագիրտական ճիւղին Պատուոյ Աստիճանաւորի վկայական ստանալով մայրաքաղաքս դարձած է:

Այս առաջին անգամն է որ հայ մը կ'արժանանայ Օքսֆորտի Համալսարանին այդ պատուաբեր վկայականին:

ՆԱՄՍԿ ԱՌԻՄԱԳՐՈՒԹԻԻՆ

Պատուարժան Տնօրէնութիւն Արեւել եւ Մասիս լրագրոց:

Մասիս ընթերցողներէն չատեր, հակառակ Ձեր արդէն ըրած զեկուցմանց, կը կարծեն տակաւին թէ ես մասն ունիմ Մասիս Խմբագրութեան եւ Տնօրէնութեան մէջ, ուստի եւ հարցումներ ու առաջարկներ կ'ուղղեն ինձ:

Զայս սխալ կարծիք միանգամ ընդ միշտ ուղղելու համար՝ հարկ կը համարիմ անգամ մ'ալ իմ կողմէ յայտարարել թէ եմ ԲՆԱԻ ՄԱՍՏԱԿՑՈՒԹԻՆ ԶՈՒՆԻՄ «ՄԱՍԻՍ» Ի ԵՒ «ԱՐԵՒԵԼԻՔ» Ի ՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՆՕՐԵՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ, եւ թէ միայն Արեւելի Թերթօնը թարգմանելու պաշտօնն ստանձնած եմ:

Խեղրելով որ սոյն յայտարարութիւն հաճիք հրատարակել Արեւելի եւ Մասիս մէջ:

Մնամ...

Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

1885 Սեպտ. 24

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻՔ

Վիճակ յ 31 Օգոստոս 1885

ՊԱՆԱՆՁԻ

ՊԱՐՏԻ

ՊԱՆԱՆՁԻ		ՊԱՐՏԻ	
	Ղուրուշ		Ղուրուշ
Բաժինք չդանձուած.....	550,000,000	Գրամագլուխ.....	1,100,000,000
Սնտուկ ի Կ. Պոլիս.....	57,870,960 16	Պանքառմէք ի շրջաբերութեան	
» ի մանածիւղս.....	55,442,963 2	» ի Կ. Պոլիս և ի մանածիւղս	42,105,200
Գանձելի փոխանակագիրք.....	486,119,308 16	Վճարելի փոխանակագիրք.....	119,728,658 20
Ընթացիկ հաշիւք Կայսերական		Ընթացիկ հաշիւք Կայսերական	
դանձուն—«պարտականք» ..	664,824,114 04	դանձուն—«պահանջողք» ...	1,689,224
Ընթացիկ հաշիւք զանազանք —		Ընթացիկ հաշիւք զանազանք—	
«պարտականք» ..	257,397,159 23	«պահանջողք».....	492,915,259 38
Փոխատուութիւնք արժէթղթոց		Դրամական աւանդք որոշ պայ-	
և վաճառաց վրայ.....	447,868,995 43	մանաժամով.....	82,119,352 20
Անշարժ և շարժական գոյք.....	8,888,127 21	Պահեստք զանազանք.....	314,290,335
Զանազանք	3,766,709 27	Վճարելի շահաբաժինք.....	4,519,293
		Զանազանք	44,811,014 32
	2,202,178,337 30		2,202,178,337 30

Վաւերացեալ ճշգրտութիւնն ըստ տուժարաց

Տնօրէն
Է. ՏԸՎՈ

Տնօրէն
Մ. ՅՈՍԹԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԽՕՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ՅԻՄՆԱՆԵՐԵՆԷ Ի ԹՈՒՐԿԵՐԵՆ

(Քէնէ-մայէ Դե-տեալեթի Թրանսէլէ մէ Թիւրքի)

ԿԻՒՅ ՊԷՅ ՏԸ ԼՈՒՍԻՆԵԱՆ

15րդ Տպագրութիւն

Կարեւոր բարեփոխումներով և ընտիր տպագրութեամբ վերատիւն ի լոյս ընծայուած է Ֆրանսերէնէ ի Թուրքերէն խօսակցութեան այս Առաջնորդն, որ իւր տեսակին մէջ առաջնակարգ գործ մը կրնայ համարուիլ: Գլխաւորաբար պատրաստուած է ուսանողաց և ուղեւորաց դիւրութեան համար: Նախորդ տպագրութեանց մէջ Փրանսերէն բառերու և խօսակցութեանց

դէմ թուրքերէն թարգմանութիւնը դրուած էր միմիայն լատինական տառերով, իսկ այս նոր տպագրութեան մէջ աւելցուած են նաեւ թարգմանութիւնք թուրքերէն տառերով: Հեղինակն այնպիսի կանոնադրութեամբ դասակարգած է գրքին գլուխներն որ անոր դիմողը պիտի կարենայ իւր ուղած խօսակցութեան մասը գտնել շատ դիւրաւ:

Գին 20 դահեկան

Կը գտնուի մայրաքաղաքիս գրաւաճառաց բով:

ՏՈՒՔ ՍԻՄՈՆ ՍԵՂՈՍԵԱՆ

Ղալաթիա, Կամոնտօ փողոց, Թիւ 7
Հիւանդ կընդունի ամեն օր կէս օրէն վերջը, մանաւորապէս միզարին գործարանաց և վիրաբուժական ախտերու համար:

ԺԱՄԱԳՈՐԾ Գ. Է. ՍԵԼՎԱ. ՃԵԱՆ

244 — ՄԱՀՏՈՒՏ ՓԱՇԱ, ԳՂՈՒՄ — 244

30 142
ՖՐՆՔ ՂՐՇ



Յրանայի ամենէ. համ
բաւաւոր գործարաններէ
միոյն մէջ խիստ խնամօք
պատրաստել տուած է նշա-
նակեալ գնով նմանը ցարդ-
չտեսնուած 15 սանդիմեղր
երկայնութեամբ խիստ ձե-
ւաւոր, զարնող, շարաթը
մի անգամ լարուող, պատի
ժամացոյցներ: օրը ընդու-
նելութեան սրահներու, սե-
նեկաց, վարժարանաց եւ
գրասենեկաց վայելուչ եւ
յարմարագոյն են, և որոց
երկար տարիներ ամենայն
կանոնաւորութեամբ բանիլն
կ'երաշխաւորէ:

Յիշեալ վաճառատան
մէջ կը գտնուին նաեւ խիստ
աժան գներով լաւ բանող
ընտիր ժամացոյցներ:

Գաւառներէ եկած յանձ-
նարարութիւնը փութով եւ
ճշգրտութեամբ կը կատար-
ուին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԳԻՍԱԻՈՐՔ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՀԵՐՈՆԻՄՈՍԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Երկրաւոր-անդամութեամբ և ուսուցիչ Աւրի-
շաքի-Բեռն

Հերոնիմոս Էֆէնտի Բարսեղեան որ
բազմամանօթ է իւր գիտական այլ և
այլ հրատարակութիւններով, Գիտաւոր
Աստեղաց վրայ ի լոյս ընծայած է այս
նոր գործ օր՝ համառօտ, բայց իւր
տեսակին մէջ նորագոյն ծանօթու-
թիւններով լի հատոր մ'է, պատկերա-
զարդ:

Այս գրքոյի ժողովրդեան, բայց ի
մասնաւորի վարժարանաց համար յօ-
րինուած է և մեծապէս օգտակար
կրնայ լինիլ անոր ընդհանրացումը մեր
ազգային վարժարանաց մէջ:

Կը գտնուի հայ գրավաճառաց քով:

Գին 10 դրուշ:

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻԴԷՄ

ՐԻԼԱՅԸՆԱ

Ծովային ապահովագրութիւն: — Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ.
Ժ. Վ. Ուիթոլ, Եօրկիատիս խան Պահչէ — գաբու, Պոլիս. կամ Ղալաթիա,
Ալէքսիատի խան թիւ 15:

507